№ 113 ԵՐԵՔՇԱԲԹԻ 27 ՄԱՅԻՍԻ

1914

ԵՐԵՔՇԱԲԹԻ 27 ՄԱՅԻՍԻ № 113

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսականը 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝
ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կը լինեն բաժանորդավճար 10 ռուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՇՐԱՖԵԱՆՑ խորին վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին իր թանգագին և անմոռանալի ամուսնու՝

ՍՐԲՈՒՀԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՇՐԱՖԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ մայիսի 25-ին Գուդաուտում: Թաղումը տեղի կունենայ Արտվինում, տոհմական դամբարանում: Մարմնի տեղափոխութիւնը Գուդաուտից՝ մայիսի 27-ին, Ռուսական Ընկերութեան երեկոյեան մեկնող շոգենաւով: Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին: 520. 1—1

Մեծ-Ղարաքիլիսայում (Երևան. նահ.) յունիսի 15-ից մինչև օգոստ. 15-ը կը ԲԱՑՎԵՆ Երկրագործ. Դեպարտամենտի
ԿԱԹՆԱՏՆՏԵՍԱԿԱՆ և ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ
ՋՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ
Տեղեկութիւնների համար դիմել Թիֆլիսում անասնաբուժական հրահանգչական կազմակերպութեան դիւանատանը (Գրիբոյեդովսկայա փ., № 5, բակում), առ. ժամը 9—11-ը:
(և.) առ. 519. 3—1

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ հետևեալ թարգմանական պիէսները.
1) Հ. ԻԲՍԷՆ „Հէդդա Գաբլէր“
4 գործ.:
2) ԲԼԷՄ „Կնոջ իրաւունքը“
4 գործ.:
Դիմել Ե-ին «Մշակի» խմբագրատուն:
(օ. մ.) առ. 509. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
(Ամառային շինութիւն)
Այսօր, երեքշաբթի, մայիսի 27-ին
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
ՀԱՄԵՐԳ ՍԻՄՖՈՆԻԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԽՄԲԻ,
Ղեկավարութեամբ Իվ. ՊԱԼԻԵՎԻ:
Սկիզբը երեկ. ժամը 8½-ին:
Հիւրերը՝ ըստ յանձնարարութեան՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 50-ական կոպ., կանայք և ուսանողները 25-ական կոպ.:
622. 1—1

ԴՈԿՏՈՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ Բեռլինի համալսարանի Charité հիւանդանոցի
Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրոֆեսորների հետ:
Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) առ. 391. 100—12

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաբեան
Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պեատիգորսկում և Եսենտուկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ:
Հասցէն՝ Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул.
առ. (և.հ.կ.) д. Архипова. 458. 25—8

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 և 25 մայիսի

ՊԱՐԻԶ.—Վիվիանին հրաժարվեց կաբինետ կազմել այն պատճառով, որ միացեալ արմատականները ընդդիմադիր դիրք են բռնել դէպի եռամեայ զինուորական ծառայութեան բանաձևը:

Դէշանէլը նոյնպէս հրաժարվեց կաբինէտ կազմել: Պուանկարէն դիմեց Դէլկասէին:

Իզվօլսկիի մօտ ի պատիւ օտարազգի քաղաքային պատգամաւորութիւնների կայացաւ շքեղ ընդունելութիւն:

ՊԱՐԻԶ.—Դէլկասէն հրաժարվեց կաբինէտ կազմելուց հիւանդութեան պատճառով: Այսօր նա ենթարկվելու է անդամահատութեան: Յետոյ կաբինէտ կազմելու առաջարկութիւնը արվեց Ժան Դիւպյուին, որ նոյնպէս մերժեց: Պուանկարէն խորհրդակցութեան հրաւիրեց Պէյտրալին:

Ապա Պուանկարէն խորհրդակցեց ճգնաժամի մասին Դումէրգի հետ, որ ստացել էր Վիվիանիի, Բուրժուայի և Րիբոյի համաձայնութիւնը:

Պէյտրալը նոյնպէս հրաժարվեց կաբինէտ կազմել:

ԱԼԲԱՆԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 և 25 մայիսի

ԴՈՒՐԱՑՑՕ.—Կառավարութիւնը մտադիր է զօրքեր ուղարկել ապստամբավայրերը: Նախնական կռւի համար արդէն ուղարկված են հիւսիսի եպիրացիների դէմ 10,000 միրդիտներ: Դուրացցօյում մնում են 700 կաթոլիկ մալիսօր:

ԱԹԷՆՔ. — Աթէնքի գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, թէ յոյն փախստական զինուորներ են ափ իջել Սանտի-Կվարանտայում և ռազմամթերքներ են ուղարկվել այնտեղ:

Մահմեդականները մտել են Այվալի քաղաքին: Ահաբեկված յոյն ազգաբնակութիւնը խնդրում է նաւեր՝ Յունաստան տեղափոխվելու համար. 6000 յոյն-փախստական սպասում են շոգենաւերի՝ ծովափին:

ԲԵԼԳՐԱԴ.—«Պրեսս Բիւրօն» հերքում է այն տեղեկութիւնները, թէ 20,000 սերբ զինւոր են շարժվել դէպի Ելբասան:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

24 և 25 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պ. Հ. Գ. զանազան քաղաքներից հեռագիրներ է ստացել հանդիսաւոր մաղթանքների մասին, որոնք կայացել են Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի ծննդեան օրվայ առիթով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Զինւորական և ծովային գործերի մասնաժողովը դռնփակ նիստում ծովային մինիստրի ներկայութեամբ ընդունեց այն օրինագիծը, որով գումարներ են յատկացվելու Սև-ծովի նաւատորմը ուժեղացնելու համար:

ԲԱԳՈՒ. — Քաղաքապետի դիւանատանը կից կայացաւ աճուրդ 36 նաւթաբեր հողաբաժիններ մշակելու համար: Յայտարարութիւն տրված է 79:

ՔՈՒԹԱՅԻՍ. — Երկաթուղագծի մօտերը սպանվեց մի ժանդարմ: Աւազակներից մինը, որ մասնակից էր նաև հրէայ Ռաժինաշվիլիի գերման մէջ, ձերբակալվեց. միւսը փախաւ վիրաւորված:

ՆԻԿՈԼԱՅԵՎ.—Ծովային մինիստրի օգնականի ներկայութեամբ ծով իջեցրին «Եկատերինա երկրորդ կայսրուհի» երկրորդ դրէդնօուտը:

Կ. ՊՈԼԻՍ.—Կայացաւ ռուսական առևտրական կոմիտէի արտակարգ նիստը, քննելու այն հարցը՝ թէ համաձա՞յն են, արդեօք, մեծ պետութիւնները աւելացնելու մաքսային տուրքերը մօտիկ ապագայում 15%-ով: Անգլիան և Ֆրանսիան համաձայնեցին կրճատելու տուրքերը մուծելու ժամանակը վեց ամսից երկուսի: Աւստրիայի և Իտալիայի համաձայնութիւնը ապահովված է բոսնիական և Լօզանի պայմանագրերով: Գերմանիայի հետ բանակցութիւնները մօտենում են իրանց վախճանին. մնում է ստանալ Ռուսաստանի համաձայնութիւնը:

ԼՎՕՎ.—Բէնդասիւկի և այլոց գործի առիթով երդուեալ ատենակալները միաձայն կայացրին արդարացնող դատավճիռ: Դատախազի պահանջով դատարանը կարգադրեց հսկողութեան տակ առնել Բէնդասիւկին և Սանդովիչին մինչև դատավճռի օրինական ոյժ ստանալը:

ԼՎՕՎ.—Դատախազի բողոքը Բէնդասիւկի և միւսների գործի առիթով յետ վերցվեց: Բոլորն էլ ազատվեցին:

ԹԵՀՐԱՆ.—Պարսկաստանի զեղչատու բանկը Սիփէհդարից ստացաւ խոշոր կոնցէսիա՝ Հիւսիսային-Պարսկաստանում նրա անտառները շահագործելու համար:

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Դվօրժէ համայնքում բանւոր Տոմչիչը գնդակահարեց իր սիրուհու ծնողներին և վտանգաւոր կերպով վիրաւորեց սիրուհուն: Պատճառն այն էր, որ ծնողները մերժեցին ամուսնացնել իրանց դստերը նրա հետ: Յետոյ մարդասպանը, ձեռք ձգելով հրացաններ, դիրք բռնեց զանգակատանը, որտեղից սկսեց անվերջ կրակել պաշարող ժանդարմների վրա: Մի քանիսը ժանդարմներից սպանվեցին, 20-ը վիրաւորվեցին: Տոմչիչը վերջ ի վերջոյ անձնասպան եղաւ:

ԲԵՐԼԻՆ.—Հաստատվեց արտասահմանեան տեղեկատու ծառայութեան սինդիկատ, որի նպատակն է լուսաբանել արտասահմանում երևացող տենդենցիոզ տեղեկութիւններն ու Գերմանիայի դէմ եղող անհիմն յարձակումները, նաև տարածել տեղեկութիւններ գերմանական արդիւնաբերութեան ու Գերմանիայի կուլտուրական նուաճումների մասին: Արտաքին գործերի մինիստրութիւնը համաձայնել է փոխարինաբար տալ սինդիկատին 250,000 մարկ, նոյնքան գումար տալիս են գերմանական արդիւնաբերութեան ներկայացուցիչները:

ԼՕՆԴՕՆ.—Ռէյտերը հերքում է «Դէյլի-Տէլէգրաֆի» այն տեղեկութիւնը, թէ անգլիական թագաւորը մտադիր է այցելել Բեռլին և Պետերբուրգ:

Սուֆրաժիստուհիները հրդեհել են Բուկինհէմի կոմսութեան մէջ մի անմարդաբնակ շինութիւն:

ԼՕՆԴՕՆ.—Սուֆրաժիստուհիները անկարգութիւններ գործեցին պատարագի ժամանակ Բրոմպտոնի եկեղեցում. երկու հոգի ձերբակալվեցին:

ՎԻԷՆՆԱ.—«Ցայթ» տեղեկութիւնների առիթով, թէ աւստրիական զօրքեր են կենտրոնացել սերբիական սահմանագլխում, «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէն» նկատում է, որ այդ լուրերի պատճառը Բոսնիայում կայանալիք զօրախաղերն են:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՉԽԵՆԿԷԼԻՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

Ի նկատի ունենալով որ Պետ. Դումայի պատգամաւոր սօց.-դեմօկրատ Չխենկէլի արտասանած ճառը Պետ. Դումայում՝ հայոց հարցի վերաբերեալ՝ յարուցել է թիւրիմացութիւններ, մենք հարկաւոր ենք համարում ստորև զետեղել այդ ճառը in extenso.

⁂

Պետական Դումայի պարոնայք անդամներ: Ժամանակի կրճատումը մինչև 10 րօպէ, դժբաղդաբար, ինձ զրկում է կատարել պատասխան տալ Պետ. Դումայի անդամ Պապաջանեանին: Այն հարցը, որը նա յարուցեց այստեղ, պարոնայք Դումայի անդամներ, ունի ահագին նշանակութիւն առանձնապէս Կովկասի համար: Այդ հարցը շօշափում է Կովկասում բնակվող ժողովուրդների միջև եղած յարաբերութիւնները:

Ինչպէս յայտնի է, այդ ազգաբնակութեան մէջ է և ռուս ազգաբնակութիւնը: Առաջինը, ինչ որ ես պէտք է մատնանշեմ, այդ այն է, որ Պետ. Դումայի անդամ Պապաջանեանը ինձ վերագրեց այնպիսի մի բան, որ իբր թէ հայերին Թիւրքիայում ճնշելու մէջ ես մեղադրեցի իրանց հայերին: Ախր, պարոնայք, այդ նոյնը կը լինէր, եթէ ես հրէաներին Ռուսաստանում ճնշելու և ջարդելու մէջ, օրինակ, մեղադրէի իրանց հրէաներին: Այդ ուղղակի ծիծաղելի է: Ճնշումների և ջարդերի մէջ այնտեղ Թիւրքիայում պէտք է մեղադրել այն տարրերը, որոնց մենք մեղադրում ենք այստեղ. այսինքն առաջին հերթին կառավարութիւնը, թիւրքաց կառավարութիւնը մի կողմից և ռուսաց կառավարութիւնը միւս կողմից: Ինքը Պետ. Դումայի անդամ Պապաջանեանն ասաց, որ հայերի և քիւրդերի թշնամական յարաբերութիւնների մէջ քիւրդական լայն շրջանները մաս չունեն և որ նրանք ոչ մի ակտիվ դեր չեն խաղում: Ես միանգամայն համաձայն եմ այն բանի հետ, որ քիւրդերը հայերին ճնշելու գործի մէջ ոչ մի ակտիվ դեր չեն կատարում, այլ գլխաւոր դերը, ինչպէս յայտնեցի, կատարում է թիւրքաց կառավարութիւնը և ընդհանրապէս տիրապետող դասակարգերը, որոնք ապրում են հէնց այդ նոյն Թիւրքիայում: Այնուհետև, ինչի մասին ես խօսեցի նախանցեալ օրը: Ես խօսեցի այն մասին, որ ռուսաց դիպլոմատիան ձեռք բերելով Հայաստանում ռեֆորմներ մտցնելը, նա ստեղծել է երկրորդ Մակեդոնիան, և ես ասացի, որ ինչպէս ներկայ Մակեդոնիայից մենք ոչ մի լաւ հետևանքներ չը ստացանք, այնպէս և ոչ մի լաւ հետևանք չենք ստանայ Թիւրքիայում ստեղծվող նոր Մակեդոնիայից: Նա հասնելու է դարձեալ նոյն դրութեան, նոյն արիւնալի վախճանին. Եւ տանուլ տուողները, ի հարկէ, լինելու են մասսաները, որոնք արիւն են թափելու, իսկ շահվելու են բոլոր ազգութիւնների տիրապետող դասակարգերը: Այնուհետև Պետ. Դումայի նոյն անդամ Պապաջանեանը խօսեց այն մասին, որ ես իմ ասածներով հաւանութիւն ստացայ Մարկով 2-րդից. Բանն ինչումն է: Ոչ, ես ասացի, թէ բարի դրացիական յարաբերութիւնների պէտք է հետամուտ լինենք մեզ հետ միասին ապրող ժողովուրդների մէջ, ինչպէս օրինակ Թիւրքիայում ապրող քիւրդերի և թիւրքերի, եթէ հայերի կողմից օտար պետութիւնների միջամտութիւնն է կանչվում... (Մարկով 2-րդ. «Միանգամայն ճիշդ է»): Նոյն դրութիւնն է և մեզ մօտ՝ Կովկասում. պարոնայք, կովկասեան բոլոր ազգութիւնները ճնշված են. բայց նրա համար, որպէսզի աւելի ազատ դրութեան հասնենք, մենք կոչ ենք անում ոչ թէ օտար միջամտութեան, այլ մենք իբրև ռուս ժողովրդի բոլոր աշխատաւոր մասսաների հետ կռւում ենք մեր կառավարութեան և Ռուսաստանում տիրող դասակարգերի դէմ, որոնք հաւասարապէս ճնշում են մեզ: Ահա այս տեսակէտը ես ողջունում եմ, որ ընդգծեց Պետ. Դումայի անդամ Ջաֆարովը: Հէնց իրանք քիւրդերը, թիւրքերն և հայերը, որ ապրում են Թիւրքաց Հայաստանում, պէտք է միահամուռ ոյժերով ճակատամարտ մղեն Թիւրքաց կառավարութեան դէմ. բայց դրա համար, պարոնայք, չը պէտք է հարցը այդպէս դնել, որ իբր թէ ընդհանրապէս հայ ժողովուրդը, որպէս այդպիսին, պէտք է կռիւ մղի կամ թիւրք ժողովրդի հետ կամ քիւրդ ժողովրդի: Ո՛չ, բոլոր այդ ազգութիւնների աշխատաւոր մասսաները պէտք է միանան իրար հետ այդ ճակատամարտը միասին առաջ տանելու: Ջարդեր եղել են ոչ միայն այնտեղ, այլև մեզ մօտ, Կովկասում, հայ-թիւրքական կոտորածը. և ո՞վ էր դրա պատճառը: Այդ ջարդը առաջ եկաւ Թիւրքաց կառավարութեան կողմից (Ձայներ աջից՝ «Ի՞նչ է ասում նա...»). Չխէիձէն տեղից, «Մի զարմանաք, խնդրեմ, այդ փաստը ձեզ լաւ յայտնի է...»): Պարոնայք, նա անցաւ արտաքին գործերի մինիստրութեան քննադատութեան և ասաց հետևեալը, որ սկզբում մտածում էին իսկական ռեֆորմներ տալ Թիւրքահայաստանին, բայց վերջ ի վերջոյ տուին «պոչատ» ռեֆորմներ. այսպէս արտայայտվեց նա. տուին ռեֆորմների «ստուերը»: Այո, Պետական Դումայի անդամ Պապաջանեան, դուք սրանցից (ցոյց է տալիս կառավարական աթոռների վրա) բացի պոչատ ռեֆորմներից ոչինչ չէք ստանայ: Իսկ ես կասկածում եմ, թէ արդեօք կը ստանա՞ք դուք այդ պոչատ ռեֆորմները, ինչպէս դուք էք ենթադրում: Այնուհետև Պետ. Դումայի անդամ Պապաջանեան յայտնեց, որ Չխենկէլին ոչինչ չը գիտէ, ես ծնվել եմ Կովկասում և այլն: Ըստ երևոյթին, ենթադրելով որ Չխենկէլին ծնվել է Ամերիկայում, Չխենկէլին նոյնպէս այնտեղ է ծնվել, Չխենկէլին գիտէ, թէ ինչ է արվում Կովկասում, և Չխենկէլին գիտէ այլև, որ նա մանդատ ունի Կարսի և Բաթումի շրջանների հայ գիւղացիներից և հայ գիւղացիները խօսակցութիւն են ունեցել Դումայի անդամ Չխենկէլիի հետ այն ճառի մասին, որը նա ասել է անցեալ տարի. այդ ճառը ստացաւ այդ հայ գիւղացիների հաւանութիւնը:

Թիւրքահայաստանը Ռուսաստանին միացնելու մասին

Ես ողջունում եմ այն, որ իմ խօսքերը ընդգծեց Դումայի անդամ Պապաջանեանը, որ թիւրքահայերն իրանք բնաւ չեն մտածում անկախութեան մասին, այսինքն Թիւրքահայաստանը Ռուսաստանին միացնելու մասին: Այդ ես ողջունում եմ, բայց դրանում ես մեղադրում էի ոչ թէ հայերին, այլ ռուս կառավարութեան: Հէնց այն ժամանակ, երբ ես նախընթաց օրը յիշեցի, հէնց այնտեղ, ուր կանգնած են մեր զօրքերը, ես ինքս եմ տեսել, որ հէնց այդ զօրքերը օրէ-օր, րօպէ առ րօպէ, այստեղից հրամանի էին սպասում, որպէսզի անցնեն սահմանը. այս ես իմ աչքերով եմ տեսել: Այդ ինչ է նշանակում: Նշանակում է այն, որ ռուսաց կառավարութիւնը ունէր այդ դիտաւորութիւնը. իսկ եթէ այդ չի արված, այդ հարցրէք Կ. Պոլսի Սանդերսի միսսիային և Գերմանիային, ոչ գերմանական պրոլետարիատին, ոչ գերմանական աշխատաւոր դասակարգին, այլ գերմանական կառավարութեանը: Այնպէս որ՝ այդ բանում մի կառավարութիւնը արժէ միւսին: Այնուհետև նա ինձ մեղադրեց, երևակայեցէք, անտարբերութեան մէջ դէպի հայերը: Ինչպէս ասած, եթէ նա իրօք ապրել է Կովկասում, ծնվել է այնտեղ և ինչ որ գիտէ, ճանաչում է ընդհանրապէս բոլոր վրացիներին, այդ դէպքում վրաց սօցիալ-դեմօկրատիային մեղադրել այն բանում, որ նա անտարբերական է դէպի միւս ազգութիւնները, այդ այնպիսի անհեթեթութիւն է, որի դէմ առարկելը ես իմ արժանապատուութիւնից ստոր եմ համարում (ծափեր ձախից): Ես ձեզ կը յիշեցնեմ միայն հայ-թուրքական կոտորածը, երբ Թիֆլիս քաղաքում մի կողմից կանգնել էին հայերը, միւս կողմից՝ Թուրքերը, և պատրաստ էին կռիւ սկսել իրար հետ. ո՞վ էր կանգնած մէջ տեղը. այդ՝ վրացիներն էին կանգնած և վրացական սօցիալ-դեմօկրատիան գնդակների տարափի տակ. այնտեղ սպանվեցին մեր ընկերները, և դուք այդ միանգամայն մոռացել էք: Այդ պատճառով ես այսպիսի եզրակացութիւն եմ անում, որ Պետ. Դումայի անդամ Պապաջանեանը, երբ թէ պաշտպանելով հայ ժողովրդի շահերը, պաշտպանեց հայ հոգևորականութեան, հայ բուրժուազիայի շահերը: Մենք կռիւ ենք մղում ինչպէս մեր վրաց բուրժուազիայի և ազնուականութեան դէմ, նոյնպէս և հայ հոգևորականութեան և բուրժուազիայի դէմ: Դուք մոռացայց եղաք կոմս Վորոնցով-Դաշկովի վրա, իսկ Վորոնցով-Դաշկովը պաշտպանում էր ձեզ Թիֆլիսում այն ճակատագրական օրը: Վորոնցով-Դաշկովը թագնվեց. նա զէնք տուեց մեր ընկերներին, և մենք պաշտպանեցինք ձեզ (ծափեր ձախից)... և դուք այստեղ քաջութիւն ունէք խօսելու Վորոնցով-Դաշկովի մասին, որի կառավարութեան օրով ամէն ինչ բացարձակապէս ճնշված է մեզանում: Ի՞նչ տեսակ է մեր դպրոցական քաղաքականութիւնը, ինչ տեսակ է կղերականական քաղաքականութիւնը և ի՞նչ տեսակ է քաղաքականութիւնը արդարադատութեան մէջ, ինչ է արվում մեզանում, իսկ ինչե՞ր եղան 1905 և 1906 թւականներին: Հայ կանայք, 60 տարեկան կանայք, որոնց մասին ես յիշեցի երէկ, բռնաբարվում էին, և այդ մասին հիմա—ուր է ձեր քաղաքական հաստատուութիւնը—մոռանում էք:

Նախագահ.—Պետական Դումայի անդամ Չխենկէլի, ձեր ժամանակը լրացաւ:

Համերաշխութեան մասին

Չխենկէլի.—Թոյլ տուէք ինձ, ես հիմա վերջացնում եմ (Ձայներ՝ «Խնդրում ենք, խնդրում ենք», «բաւական»)... Ես կրկնում եմ, Պետական Դումայի անդամներ, որ դուք ինչ կերպ էլ վերաբերվէք այս հարցին, սա Կովկասի ազգաբնակութեան համար ահագին նշանակութիւն ունի: Զի որ այս առարկութիւնների հողի վրա այնտեղ այնպիսի դէպքեր տեղի կունենան, որ դուք յետոյ միայն կը ցաւէք, որ նախապէս չը կարողացաք նախատեսել այդ հետեւանքները։ Ազգայնական այդպիսի արտայայտութիւնը, որ եղաւ Պետ. Դումայի անդամ Պապաջանեանի կողմից, այդ ուղղակի նշանակում է նաւթ ածել կրակի վրայ, իւղ ածել այն հրդեհի վրայ, որ իսկապէս գոյութիւն ունի այնտեղ, որը վառւում է և ծաւալւում. այդ ուղղակի անթոյլատրելի է։ Ես կրկնում եմ. մեր կողմից, վրաց սօցիալ-դեմօկրատների կողմից, հայ սօցիալ-դեմօկրատների կողմից, թուրք սօցիալ-դեմօկրատների կողմից,— նրանց մէջ կան սօցիալ-դեմօկրատներ,— ռուս սօցիալ-դեմօկրատների կողմից, որ տարվում է մի միակ տակտիկա. այդ՝ համերաշխութեան տակտիկան է Կովկասի բոլոր ազգութիւնների միջև, որ տարվում է առանց որևէ կողմնակի միջամտութեան։ Մենք կամենում ենք մեր ներքին ուժերով յաղթել այն խոչընդոտները, որոնք կան մեզ մօտ Ռուսաստանում, և կամենում ենք ոչ թէ միայն նրանց հետ միասին, որոնք ապրում են Կովկասում, այլ և նրանց հետ, որոնք ապրում են միացեալ Ռուսաստանում, նրա բոլոր աշխատաւոր մասսաների հետ միասին։ Մենք կռւում ենք ինչպէս արտաքին քաղաքականութեան դէմ, նոյնպէս և ներքին, ռուսական կառավարութեան ղեկավար շրջանների քաղաքականութեան դէմ... (Մարկով 2-դ. «Հրաշալի՛ ասվեց...»)։ Ես իմ ճառը ընդհատեցի Վօրօնցօվ-Դաշկօվի վրա։ Ես ասում եմ, որ Վօրօնցօվ-Դաշկօվը իր քաղաքականութեան մէջ, ինչպէս այդ շատերն ասում են, անց է կացնում բոլոր այն ազգայնական տենդենցները, որոնց դէմ մենք կռիւ ենք մղում։ Ճիշդ է, երկար հիւանդութիւնից յետոյ, երբ նա Թիֆլիս վերադարձաւ, արտասովոր կերպով դիմաւորեցին նրան, դիմաւորեցին այնպէս, ինչպէս դիմաւորում են թագաւորներին և թագակիր անձերին։ Բայց ով սարքեց այդ դիմաւորումը։ Հայ բուրժուազիան և վրաց ազնուականութիւնը։ Եւ եթէ հայ բուրժուազիան ու վրաց ազնուականութիւնը մտածում են, որ իրանք են արտայայտում ողջ Կովկասի կարծիքը, նրանք չափազանց սխալվում են։ Րոպէ է եղել, երբ նրան պատասխանում էին մեր առաջ, երբ ամենատէր բուրժուազիան իր ցիլինդրներով գնում էր Նախալօվկա, ուր նստած էինք մենք, և կարգադրում էին, երբ վրաց ազնուականութիւնը, թոյլ տուէք ասելու, սողում էր դէպի նրանք, որոնց դէմ հանդէս ելաք դուք այժմ։ Այո, Վօրօնցօվ-Դաշկօվին շատ են յարգում, դիմաւորում են հանդիսով և այլն, սակայն ամենևին ոչ Կովկասի ազգաբնակութիւնը, որքան մենք դրա տակ հասկանում ենք գիտակից, աշխատաւոր դասակարգը ողջ ազգաբնակութեան, այլ որքան դուք կարող էք հասկանալ բուրժուազիա, ազնուականութիւն, հոգևորականութիւն, խնդրեմ, դուք այդ կարող էք ասել, բայց այն ժամանակ, ինձ թւում է, դուք իրաւունք չունէք խօսելու ամբողջ հայ ժողովրդի անունից, որովհետև այդ ժողովրդի կարծիքի հետ ես աւելի կամ պակաս չափով ծանօթ եմ և իմ պարտականութիւնն եմ համարում իմ կարծիքով պաշտպանել ոչ միայն իմ ժողովրդի շահերը, այլ և հայ ժողովրդի, որովհետև, պարոնայք, սօց.-դեմօկրատիան է, բացի այն, որ նա սօցիալիստական...

Նախագահ.—Պետական Դումայի անդամ Ջխենկէլի, ես խնդրում եմ խօսել արտաքին գործերի մինիստրութեան նախահաշւի հարցի մասին

Ջխենկէլի.—Նա միջազգային։ Ի՞նչ է նշանակում միջազգային։ Այդ նշանակում է համերաշխութիւն բոլոր ազգութիւնների միջև, որոնք բնակվում են ողջ Ռուսաստանում (ծափեր ձախից)։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Շաբաթ, մայիսի 24-ին, երեկոյեան ժ. 8-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում կայացաւ Հայոց Դրամատիկ. Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը, որ այս անգամ նմանը չը տեսնված բազմամարդ էր, որովհետև նրան մասնակցում էին մօտ 80 հոգի, և մի այդքան էլ կողմնակի հասարակութիւն կար։

Թէ այդ բազմամարդութիւնը և թէ այն ցաւալի ֆինալը, որ տեղի ունեցաւ ընտրութիւնների ժամանակ, ստիպում են մեզ մի քիչ աւելի մանրամասն նկարագրել այդ ժողովը։

Նիստը բացեց վարչութեան փոխ-նախագահ տիկին Վ. Մամուլեան և առաջարկեց ընտրել ժողովի նախագահ։

Ժողովը ընտրեց նախագահ Հ. Առաքելեանին, որ առաջարկեց ընտրել քարտուղար։ Ընտրվեց Եր. Խարազեան։

Նախագահը յայտարարեց ժողովի օրակարգը, որ էր 1) Ընկերութեան նոր անդամների ընտրութիւն, 2) խորհրդի տեղեկագիրը և զեկուցումը, ինչպէս և հաշիւը 1913/14 թատերաշրջանի և գործունէութեան մասին, վերստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ միասին, 3) 1914/15 թատերաշրջանի նախահաշիւը, 4) մրցանակաբաշխութեան ժիւրիի զեկուցումը, 5) ընտրութիւններ խորհրդի 2 անդամի և 3 փոխ-անդամի, մրցանակաբաշխութեան յանձնաժողովի 7 անդամի և 3 փոխ-անդամի և վերստուգող յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի։

Օրակարգի յայտարարութիւնից յետոյ, խորհրդի անդամ Ա. Նազարէթեան առաջարկեց յարգել յիշատակը այն բեմական գործիչների և անձանց, որոնք, վերջին ընդհանուր ժողովից յետոյ, վախճանվել են և որոնք այս և այն ձևով օգտակար են հանդիսացել հայ թատրօնի գործին և կապ ունեն բեմի հետ։ Դրանք են՝ Ս. Սաֆրազեան, Սաղդարեան, Գէորգ Բարխուդարեան, Ցուշիկ-Ժան, Ալէքսանդր Քալանթար և վրաց դերասան Կ. Մեսխի։ Ժողովը յոտնկայս յարգեց հանգուցեալների յիշատակը։

Ապա վարչութիւնը առաջարկեց Ընկերութեան անդամ ընտրել մօտ 70 անձանց, որոնք նոր էին գրվել անդամ։ Ժողովը հաստատեց ցուցակը։

Վարչութեան անդամ Ա. Նազարէթեան կարդաց տեղեկագիրը վարչութեան գործունէութեան մասին, իսկ հաշիւը, որ տպված և ցրված էր անդամներին, ժողովը նորից չը կարդաց, այլ լսեց միայն վերստուգող յանձնաժողովի գրաւոր զեկուցումը, որով խիստ քննադատութեան էր ենթարկում վարչութեան գործունէութիւնը։ Ըստ հաշւի՝ վարչութիւնը 1913/14 թատերաշրջանի ընթացքում եկամուտ ունեցել է 26,481 ր. և ծախք 28,410 ր., ուրեմն դեֆիցիտ 1929 ր.։ Եկամուտի մէջ 12,000 ր. կազմում են նպաստներ զանազան անձերից, իսկ ներկայացումներից (19-ը Արտիստական Թատրօնում, 18-ը Թիֆլիսի ժողովարանում և 9-ը Ժողովրդական Տանը) 13,471 ր.։

Վարչութեան գործելակերպը և տեղեկագիրը ենթարկվեց քննադատութեան ժողովականների կողմից և երբեմնակի շատ բուռն կերպով։ Վարչութեան անդամներ տ. Մամուլեան և Ա. Նազարէթեան տուին բացատրութիւններ։ Շիրվանզադէ, պաշտպանելով վարչութեան, ասաց, որ 20—25 տարի առաջ հայ հասարակութիւնը աւելի էր հետաքրքրվում թատրօնով, քան այժմ, և թատրօնական գործը աւելի նպաստաւոր պայմանների մէջ էր գտնվում, քան այժմ։

Ս. Ցարութիւնեան անարդար համարելով բոլոր մեղը ձգել վարչութեան վրա, մի երկար ճառով ցոյց տուեց, որ անյաջողութեան գլխաւոր պատճառը նա համարում է գործելակերպը. Թատրօնական գործի ղեկավարութիւնը իր ամբողջ պատասխանատուութեամբ պէտք է յանձնել դերասանական խմբակցութեան, իսկ վարչութիւնը պէտք է լինի միայն աջակցող։ Ս. Ցարութիւնեանի այս միտքը, որ առաջ ևս արծարծվել է քանիցս, գտաւ ժողովականների կողմից շատ կողմնակիցներ և հակառակորդներ։ Ոմանք թատրօնական գործի գլխաւոր անյաջողութեան պատճառը համարում են սեփական թատրօն չունենալը. այլք վնասակար են համարում թատրօնական գործի ղեկավարութիւնը յանձնել դերասանական խմբակցութեան, որովհետև դերասանական ընտանիքի մէջ չը կայ համերաշխութիւն և միութիւն։

Ամփոփելով վիճաբանութիւնները և առաջարկները, նախագահ Հ. Առաքելեան յայտնեց, որ բոլորը կարելի է երկուսի վերածել. մէկը՝ սեփական թատրօն ունենալու հարցը, միւսը՝ թատրօնական գործի ղեկավարութեան կամ գործելակերպի հարցը։ Արդեօք անհրաժե՞շտ է սեփական թատրօն ունենալ, թէ պէտք է մի այլ հիմնարկութեան հովանու ներքոյ պատսպարվել. այդ հարցը պէտք է կազմի առանձին խորհրդակցութեան նիւթ, ուստի աւելի յարմար է յանձնել վարչութեան՝ մօտիկ ապագայում գումարել խորհրդակցութիւն թատրօնական գործին մօտիկ կանգնած ձեռնհաս անձերից և լուծել հարցը։ Գալով գործելակերպին, այս տարվայ համար որևէ փոփոխութիւն մտցնել նրա մէջ անկարելի է, քանի որ վարչութիւնը արդէն որոշ կարգադրութիւններ է արել առաջիկայ սեզոնի համար, հետևաբար մնում է մտածել ապագայի մասին. իսկ դրա համար ամենայարմարն է իրագործել Ալ. Քալանթարի առաջարկը՝ գումարել թատրօնական գործիչների համագումար։

Ժողովը ընդունեց այս առաջարկները։

Նախքան անցնելը օրակարգի հետևեալ հարցերին, այն է նախահաշւի քննութեան և մրցանակաբաշխ յանձնաժողովի զեկուցման, առաջարկ եղաւ կատարել ընտրութիւնները։ Այս առաջարկն ընդունվելով, զեկուցվեց, որ վարչութեան կազմից վիճակով դուրս են գալիս երկուսը՝ տ. Վ. Մամուլեան և պ. Գ. Երիցեան, ուրեմն պէտք է ընտրել 2 անդամ և բացի դրանից 3 փոխ-անդամ։

Առաջարկվեցին կանդիդատներ—Շիրվանզադէ, Գ. Մելիք-Ղարագեօզեան, տ. Վ. Մամուլեան, Գ. Երիցեան, Ա. Ղազարեան, Վ. Ահարոնեան, Ս. Գալստեան, Ռ. Մարտիրոսեան, Ց. Քոչարեան, Պ. Դօլուխանեան։ Հրաժարվեցին քուէարկվելուց Շիրվանզադէ, Գ. Մելիք Ղարագեօզեան և Պ. Դօլուխանեան, իսկ մնացեալները գաղտնի քուէարկութեան ենթարկվելով ստացվեց հետևեալ արդիւնքը, 75 քուէարկողների մասնակցութեամբ.

Գ. Երիցեան	ստացաւ	47	սպիտակ	28	սև
Ա. Ղազարեան	»	46	»	26	»
տ. Վ. Մամուլեան	»	35	»	44	»
Ց. Քոչարեան	»	35	»	39	»
Ս. Գալստեան	»	23	»	52	»
Վ. Ահարոնեան	»	37	»	38	»
Ռ. Մարտիրոսեան	»	34	»	38	»

Տիկին Վ. Մամուլեանի սպիտակ և սև քուէների թիւը դուրս եկաւ 79, մինչ քուէարկողների թիւը 75 էր։

Հետևաբար ընտրված էին միայն Գ. Երիցեան և Ա. Ղազարեան։

Այս հետևանքը ցնցումն առաջ բերեց, մանաւանդ երբ վարչութեան անդամ Ց. Ջմշկեան յայտարարեց, որ թէ ինքն և թէ վարչութեան նախագահ պ. Գ. Տուրինեան հրաժարվում են մնալ վարչութեան կազմի մէջ. հրաժարվում է նաև վարչութեան անդամ Հ. Ցովհաննիսեան։ Այդպիսով վարչութեան գրեթէ բոլոր անդամները, բացի Ա. Նազարէթեանից, հրաժարվում են և վարչութիւնը մնում է առանց նախագահի և փոխ-նախագահի։

Երբ ժողովականները պնդում են յայտնել, թէ ինչ պատճառով են հրաժարվում, նախագահ Հ. Առաքելեան յայտնում է, որ հրաժարվողները իրան յայտնեցին, թէ չեն կարող պաշտօնավարել Գ. Երիցեանի հետ։

Նախագահը փակում է ժողովը, յայտարարելով, որ ժողովի շարունակութիւնը կը լինի մի շաբաթից յետոյ։

Մեր կարծիքը ընտրութիւնների հետևանքի մասին յաջորդ անգամ։

ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, մայիսի 25-ին, Թիֆլիսի 22 եկեղեցիներում կայացաւ պատուիրակների ընտրութիւնը՝ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներ ընտրելու համար։ Մայիսի 18-ին արդէն մի եկեղեցում՝—Հրեշտակապետաց— կայացել էր ընտրութիւն։

Ընտրութեան արդիւնքն հետևեալն եղաւ.

1) *Վանքի մայր եկեղեցի.*—Ժողովը տեղի ունեցաւ աւագ քահանայ տէր-Եղնիկի նախագահութեամբ և մօտ 130 ծխականների մասնակցութեամբ։ Ընտրութիւններին դիմելուց առաջ ծխական Լ. Տիգրանեան (հոգաբարձու Ներսիսեան դպրոցի) առաջարկ մտցրեց ընտրել միաձայն, առանց քուէարկութեան, պ. Լևոն Մանթաշեանին պատուիրակ, իբրև յարգանք այն բարեգործութեան, որ նրա հայրը և ինքը մատուցել են Ներսիսեան դպրոցին։ Սակայն ծխականների մեծամասնութիւնը գտաւ, որ պատուիրակ ընտրելը մի առանձին վարձատրութիւն չէ, ուստի և յարմար գտաւ, որ Վանքի կողմից ընտրված պատուիրակների վրա պարտականութիւն դրվի պատուիրակների առաջիկայ ժողովին առաջարկել ընտրել պ. Լ. Մանթաշեանին Ներսիսեան դպրոցի պատուաւոր հոգաբարձու, մի պաշտօն, որ աւելի պատուաւոր և յարմար է, քան մի հասարակ եկեղեցու կողմից պատուիրակ ընտրելը։ Ժողովը այս կերպով լուծեց Լ. Տիգրանեանի առաջարկը, որ, անկասկած, ունէր ներքին նպատակ, շփոթութիւն առաջ բերելու կանդիդատների ցուցակի մէջ։ Սակայն ժողովը այնուամենայնիւ չը կարողացաւ կատարել պատուիրակների ընտրութիւնը, որովհետև ընտրական թերթիկներն անկանոն կերպով բաժանվելով և շտապով, ընտրողների թիւը անկարելի եղաւ ստուգել, ուստի և որոշվեց փակել ժողովը և շարունակութիւնը կատարել առաջիկայ կիրակի, յունիսի 1-ին։

2) *Քամոյենց եկեղեցի.*—Այդտեղ ևս ընտրութիւնը չը կատարվեց, որովհետև ընտրողները բաժանվել էին երեք խմբակցութեան և կանդիդատների երեք ցուցակ կար, որոնց ոչ մէկը մեծամասնութիւն չը ստացաւ։ Ժողովի շարունակութիւնը լինելու է առաջիկայ կիրակի, յունիսի 1-ին։

3) *Ջգրաշէնի եկեղեցի.*—Այս եկեղեցում, ընտրութիւնն ընթացաւ կանոնաւոր և ընտրվեցին պատուիրակներ՝ բժշկ. Կ. Ստեփանեան (45 ձայնով), Յովսէփ Խունունց (45), Ալէքսանդր Քալանթարեան (44), Ստեփան Սուլխանեան (42) և Արշակ քահ. Մինասեան (42)։ Ց. Խունունց հրաժարվելով, պատուիրակներ ճանաչվեցին բժշկ. Կ. Ստեփանեան և Ալ. Քալանթարեան։

4) *Մողնու եկեղեցի.*—Այստեղ հաւաքվել էին 144 ծխական. նախագահութեան համար առաջարկվեցին Հ. Առաքելեան և Ստ. Լիսիցեան։ Ձայների մեծամասնութեամբ (86) ընտրվեց Ստ. Լիսիցեան։ Ծխական Արշ. Մխիթարեան առաջարկեց ամենից առաջ ստուգել իրաւատէր ծխականների ցուցակը, ասելով որ մինչև այդ ստուգութիւնը չը կատարվի, ժողովը չէ կարող ճանաչվել օրինաւոր, մանաւանդ որ մի քանի ծխականների մասին (ըստ ծխական Նաւտիկեանի՝ մօտ 20 հոգի, գուցէ և աւել) կասկած է ծագում, որ արդեօք նրանք 2 տարվայ ծխակա՞ն են թէ ոչ, քանի որ շատ ծխականներ, որոնք մտցված են տէր-Վարդան քահանայի ցուցակի մէջ, չը կան վերջին անգամ կազմված ցուցակի մէջ, և ներկայ եղող քահանաները (տէր-Սիմէօն և տէր-Ցովհաննէս) չեն ճանաչում նրանց. մի երկուսն էլ իրանք յայտնեցին, որ միայն մի տարի են ծխական։ Ժողովի մեծամասնութիւնը, չը կամենալով կատարել այդ ստուգութիւնը, 68 ծխականներ չը կամեցան մասնակցել ընտրութեան և հեռացան։ Մնացածները, թւով 76 հոգի, ընտրեցին պատուիրակներ Ստ. Լիսիցեանին և Ց. Թումանեանին։ Ինչպէս լսում ենք, հեռացածները բողոք են ներկայացնելու առաջնորդին։ Պէտք է նկատել, որ այս անգամ ևս, ինչպէս և միշտ, թիւրիմացութիւնների և կասկածների տեղի տուեց տէր-Վարդան քահանայի ցուցակը։

5) *Բեթղեհէմի եկեղեցի.*—Այստեղ ժողովը կայացաւ բժշկապետ Բագրատ Նաւասարդեանի նախագահութեամբ, բայց ծխականներ Գ. Տէր-Ստեփանեան և ուսուցիչ Ստամբօլցեան, պահանջելով գաղտնի քուէարկութիւն, բժշկ. Բ. Նաւասարդեան ստացաւ 140 ձայն, իսկ Գ. Տէր-Ստեփանեան միայն 25 ձայն։ Ապա կատարվեց պատուիրակների ընտրութիւնը և գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին բժշկ. Բ. Նաւասարդեան (130 ձայն), Մեհրաբեան քահանայ (127 ձայն) և անձնափոխանորդներ՝ Աբուլեան քահ. (114 ձ.) և Ց. Խուդադեան (95 ձայն)։

6) *Ս. Նշան եկեղեցի.*—Պատուիրակներ ընտրվեցին Հ. Համբարձումեան (36 ձայն) և Ս. Խանդամիրեան (36 ձայն), իսկ անձնափոխանորդներ՝ Բէժան Ամիրաղեան և Ս. Խաչիկեան։ Ներկայ էին 53 ծխականներ։

7) *Ջորաբաշի ս. Գէորգ եկեղեցի.*—Ներկայ էին 43 ծխականներ, որոնք ընտրեցին պատուիրակներ՝ Աբգար Տէր-Աբրահամեանին (34 ձայն) և Մ. Աֆրիկեանին (25 ձ.), իսկ անձնափոխանորդներ՝ Նալբանդեանին և Միրաքեանին։

8) *Ջրկինենց եկեղեցի.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Միքայէլ Աթաբէկեան (16 ձայնով), Սամսոն Ցարութիւնեան (15), իսկ անձնափոխանորդներ՝ Լևոն Ղուլեան (14) և երեցփոխ Գրիգորեան (14 ձայնով)։

9) *Վերայի ս. Խաչ եկեղեցի.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Աստուածատուր Երիցեան (21 ձայն) և Մակար Ջմշկեան (18 ձայն). անձնափոխանորդներ՝ Լ. Ծգնաւորեան և Կ. Ղազարեան։

10) *Կուկիայի ս. Աստուածածին.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Սարգիս Խարազեան (19 ձայնով) և Ստեփան Քափանակեան (16 ձայնով)։

11) *Թանդոյեան եկեղեցի.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Սամուէլ Բալադեան (43 ձ.) և Ա. Երզնկեան (48 ձայնով)։

12) *Ս. Կարապետի եկեղեցի.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Մկրտիչ Քալանթարեան և Աւետիք Մանուէլեան, իսկ անձնափոխանորդներ՝ Արտաշէս Տէրտէրեան և Վ. Եղիազարեան։

13) *Քարափի ս. Գէորգ.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Առաքել Աւագեան և Գրիգոր Մալինեան, իսկ անձնափոխանորդներ՝ Ղևոնդ ք. Մեհրաբեան և Կարապետ Աւագեան։

14) *Ս. Գէորգ եկեղեցի,*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Յովսէփ Ամիրխանեան (62 ձ.), Ա. Աբեղեան (59), իսկ անձնափոխանորդներ՝ Աւետեան և Բասսեան։

15) *Ջուղուրէթի ս. Աստուածածին.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Գէորգ Աբազեան և Ա. Ալիխանեան 17-ական ձայնով։ Ընտրութեանը մասնակցում էին 20 հոգի։

16) *Հրեշտակապետաց.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին մայիսի 18-ին Երեմիա Աղեկեան (26 ձ.) և Աւետիք Ղոնղաշեան (36 ձայն)։

17) *Շամքորեցոց Կարմիր աւետարան.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Արշակ Ղոնղադազեան և Ստեփան Մազմանեան։

18) *Նորաշէն եկեղեցի.*—Այստեղ պատուիրակներ ընտրվեցին Սարգիս ա.-ք. Շիօյեանց և Լևոն Եւանգուլեան, իսկ անձնափոխանորդներ՝ Գ. Թամամշեան և Գարսօ Արէշեան։

19) *Էջմիածնեցոց եկեղեցի։*—Այս եկեղեցում պատուիրակներ ընտրվեցին Ղևոնդ ք. Մամիկոնեան և Վարդան Ղարիբեան։

20) *Ս. Լուսաւորիչ եկեղեցում.*—Այս եկեղեցում պատուիրակներ ընտրվել են Ազարիա Աշուղբաբեան և Աստ. Ցարութիւնեան, իսկ անձնափոխանորդներ՝ Գէորգ Բաբուրեան և Ալ. Մարգարեան։

Մնացած երեք եկեղեցիների, այն է՝ Նաւթլուղի, ս. Մինաս և ս. Սարգիս եկեղեցիների պատուիրակների մասին կը հաղորդենք յաջորդ անգամ։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂ. ԴՈՒՄԱՅԻ ԳՈՐԾԵՐԻՑ

VI

Այժմ անցնենք ներքին բաժանմունքներին. այնտեղ էլ մխիթարական շատ քիչ բան կը գտնենք։

Իրանց դեմօկրատ յորջորջող ծառայողները այստեղ շարունակ գտնվելով լարված դրութեան մէջ՝ աւելի են խրվում իրանց ձեռքով ստեղծած ճահճի մէջ և մանրանում մինչև ցաւալի աստիճանի։

Եթէ վարչութեան անդամները տեսնում են այդ ճահիճը և լռում են, դա ի հարկէ շատ ցաւալի է. իսկ եթէ չեն տեսնում, կրկնակի ողբալի է, որ հասարակական հիմնարկութեան շահի ղեկավարութիւնը թոյլ ձեռքերի մէջ է գտնվել։

Մի այսպիսի ծանր դրութեան հետևանքը այն կօնկրետ իրականութիւնն է, որ առաջին պատահած քաղաքացուն հարցնէք նրա և քաղ. վարչութեան հաշիւների մասին, իսկոյն կը լսէք բողոք և սոսկալի հայհոյանք քաղաքային ինքնավարութեան հասցէին։ Մէկը դժգոհ է, որ ինքը տուել է պահանջվող գնահատական կամ մի այլ տուրքը, բայց երկրորդ անգամ են պահանջում, միւսը պնդում է, որ իր տուածը մուտք է գրվել Պետրոսի հաշւին, Մարկոսի հաշիւը խառնել են Կիրակոսի հաշւի հետ. և այսպէս անվերջ տրտունջներ։

Օրինակ՝ ցանկալի էր մի փոքրիկ րէվիզիա կատարել բոլոր տեսակի ապառիկների և այլ խնդիրների վերաբերեալ, և մեր հայրերը գուցէ գտնէին գրքերում բազմաթիւ անկանոնութիւններ, սխալներ, անկատար թողնված գործեր ու թղթեր, ոչ թէ արված յետին մտքերով, այլ հէնց այնպէս, ռուսի ասած такъ себѣ, իսկ այդ քաօսից տուժողը միայն ի հարկէ միջին և ստորին բնակչութիւնն է, որ շնորհիւ քաղաքական պայմանների ոչինչ անել չէ կարող։ Դումայում նստածները, շնորհիւ զպանակների, պարտերի ներկայացուցիչներն են, որոնք միայն մտածում են իրանց և իրանց նմանների մասին։

Ծայրամասերը թաղված են խաւարի ու ցեխի մէջ, իսկ կենտրոններում, ուր այդ կրեսոսներն են ապրում, մտածում են ինչպէս սալայատակել փողոցները, որ կառքերն անցնելիս չը դղրդան և իրանց քունը չը խանգարեն։

Ի հարկէ, հիւանդ պայմանների մէջ ապրող օրգանիզմը երբեք առողջ լինել չէ կարող, ուստի այդ է պատճառը, սխալված չենք լինի եթէ ասենք, որ մեր բոլոր քաղաքների ինքնավարութիւններն իրար արժեն, և մէկը միւսի պատճէնն է ներկայացնում։

Մասնաւորենք մեր խօսքը մի քանի խնդիրների նկատմամբ. ուր հասարակ պարտաճանաչութիւն է պահանջվում, ոչ թէ հերոսութիւն, կը տեսնենք այստեղ էլ մեր «հայրենի» ինդիֆերենտիզմը։ Թղթի վրա կանոններ գրել, կարգադրութիւններ անել բաւական չէ, այլ և պէտք է հետևել, որ նրանք կիրառվեն կեանքի մէջ։ Օրինակ՝ առևտրա-տնտեսական մասի աւագ-տեսուչը, որ կարելի է ասել միակ մարդն է, որ հասել է այդ աստիճանին հասարակ գրագրի պաշտօնից առանց խնամէական կապերի, այլ իր եռանդով ու աշխատասիրութեամբ, կենդանութիւն է ուզում մտցնել իրան հաւատացված առևտրա-տնտեսական պօլիցիայի մէջ, բայց նրա իղձերը մնում են իղձեր։ Բայց և այնպէս ըստ հնարաւորի գործում է նա։ Նրա իշխանութեանն ենթարկվող ծառայողները, նրա պահանջով, կազմում են սակագին խախտողների, կանոններ խախտող հացթուխների, նօրմալ հանգստութիւնը խանգարող պարտազանցների վրա հազարաւոր արձանագրութիւններ, բայց արձանագրութիւնների այդ կոյտերը յետոյ փոխվում են անվերջ կոտորակի։ Դրանց մի մասը անվերջութիւնից —ոչնչութիւն դառնալուց յետոյ, ի հարկէ, հասնում է հաշտարար դատաւորին. բայց մազալուն այն է, որ քաղ. վարչութեան փաստաբանները մէկ գնում են, մէկ չեն գնում դատը պաշտպանելու համար, որի հետևանքն այն է լինում, որ պարտազանցները շատ անգամ արդարանում են կամ 25 կոպէկով են տուգանվում դատաւորների կողմից։ Արձանագրութիւն կազմած վերահսկիչը երբ տեսնում է մէկի վրա արդարացի կազմած իր 5—10 արձանագրութիւնները տարվայ ընթացքում 2—3 ր. տուգանքով են վերջանում, իսկ յետոյ փողոցում այդ պարտազանցների կողմից ծաղր ու ծանակով, մեծ մասամբ էլ գռեհիկ հայհոյանքով, ակամայից նա էլ դիմում է քաղ. հայրերի ինդիֆերենտիզմին։ Եւ սա շատ բնական է. «Каковъ попъ, таковъ приходъ»—ասում է առածը։

Բայց սրա հետևա՞նքը...

Սրա հետևանքը լինում է այն, որ հացթուխը, որ պարտաւոր է 3-րդ տեսակի հաց թխել, չէ թխում, կամ թխում է նմուշի համար, իսկ թխում է զանազան ձևի հացեր, ծախում հատով. չը նայած քաղ. վարչութիւնը ամեն օր շրջաբերական է ցրում առևտրա-տնտեսական մասում ծառայողներին՝ այն մասին, որ հացթուխները քաշով ծախեն բոլոր տեսակի զանազան ձևերով թխված հացերը, բայց մնում է ձայն բարբառոյ յանապատի. մսավաճառներն ամեն ժամ խախտում են սակագինը, վաճառականները նօրմալ հանգստութեան ժամերը, որը ձեռք բերելու համար այնքան տուժողներ են եղել. գիւղից մթերքներ բերող գիւղացիների ձեռքից խլվում են ծայրամասերում նրանց բերածները և ազգաբնակութեան հասնում երրորդ, չորրորդ ձեռքերից։ Եւ սա էլ շատ բնական է, որովհետև կազմված արձանագրութիւնների արժէքը պարտազանցները գիտեն, և այնքան են երես առել, որ խեղճ քաղաքացին նոյն իսկ վախենում է սակարկել որևէ մթերքի մասին, որովհետև պատասխանի փոխարէն միայն հայհոյանք է ստանում։ Եթէ չեն հաւատում մեր քաղաքի հայրերը, թող մի անգամ Հարուն-ալ-Ռաշիդի պէս ծպտեալ գնան այդ մսավաճառների, այդ հացթուխների, առ հասարակ անհրաժեշտ պարէնի վաճառողների հետ առևտուր անեն և տեսնեն իսկութիւնը։

Ով որ հարուստ է, փորը հաստ, ճակատին կօկարդ կամ ուսերին պագոն կամ որևէ նշան ունի, նրանք այդպիսիների հետ վարվել գիտեն և «բարին ջան» ասելով ճանապարհել, բայց վայը եկել է տարել հասարակ մահկանացուին, որ մուրճի հետ գործ ունի, քլունգի հետ, կամ գոյութեան կռւի մի այլ տեսակի արհամարհված զէնքի հետ... Դարձեալ կրկնում ենք. բաւական չէ ընտրվել, բաւական չէ ճառեր խօսել, բաւական չէ կանոններ մշակել, շրջաբերականոնը գրել, այլ այդ բոլորը հարկաւոր է իրականացնել կեանքի մէջ քայլ առ քայլ հասնելով մինչև վերջին ծայրը։ Փառք Աստուծոյ, խօ սա էլ Պետ. Դուման չէ, որի մշակած օրէնքները իրականացնելը կեանքի մէջ մինիստրներից կախված լինի...

Ախր քարերն անգամ աղաղակում են, չէ որ հասարակական ինքնավարութիւնն ու բիւրօկրատական կարգերը տարբեր հասկացողութիւններ են։

Գոնէ քիչ էլ անհրաժեշտ է լինել պարտաճանաչ և համեստ, հակառակ դէպքում հասարակական թռչակները շատ դժուար են մարսվում...

Ս—ա

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Պետերբուրգ, 24 մայիսի

Նախագահում է Ռօձեանկօն։

Քննութեան է առաջարկված առևտրի մինիստրութեան նախահաշիւը։

Տեղեկատու Գօղնեվը ընդգծում է, որ Դումայի ցանկութիւնների մեծ մասը մինիստրութիւնը ընդունել է ի գործադրութիւն։

Պրոտոպոպովը նկատում է, որ առևտրի մինիստրութեան մէջ, չը նայած նրա կենտրոնական և տեղական կազմակերպութեան անբաւարար դրութեան, եռանդուն աշխատանք է կատարվում։ Մինիստրութիւնը ունկնդրում է հասարակական կազմակերպութիւնների ձայնին և չէ խուսափում նրանց օգնութիւնից։

Տուլեակովը և Բաղայեվը գտնում են, որ մինիստրութիւնը ոչինչ չէ արել բանւորական հարցում։ Բանւորների իրաւազրկութիւնը շարունակվում է։ Մինիստրութիւնը պաշտպանում է արդիւնաբերողների կազմակերպութիւնները, արդիւնաբերողների լօկաուտները թոյլատրվում են, մինչդեռ բանւորների միութիւնները հալածվում են։ Այդպիսի կացութեան մէջ բանւորներին մնում է իրանք իրանց դրութեան բարելաւման մասին մտածել։

Շինգարևը կարծում է, որ ընդհանուրբորսային սարսափը արգասիք է անկանոն օրէնսդրութեան ու գոյութիւն ունեցող կարգերից բղխող անվստահութեան, որովհետև ոչ ոք հաւատ չունի վաղվայ օրվան, չիմանալով թէ ինչ է յղանալու կառավարողների մտքում, որոնք կամենում են Ռուսաստանից շինել կղզի միւս համաշխարհային մեծ պետութիւնների շարքում։ Բանւորական հարցը Ռուսաստանում գտնվում է ամենախայտառակ վիճակում. առանց աշխատանքի պաշտպանութեան անկարելի է ունենալ արդիւնաբերական կեանքի կանոնաւոր զարգացում։ Բանւորներին ոչ մի հնարաւորութիւն չէ տրվում՝ կռիւ մղել լէգալ ճանապարհով սեփական իրաւունքների համար, և այդպիսով բանւորներին դրդում են յեղափոխականութեան։ Ոչ պակաս վատթար վիճակումն է և առևտրա-արդիւնաբերական ծառայողների 2 միլիոն դասակարգը։ Առևտրական ծառայողներ վարձելու պայմանագրի օրինագիծը մերժվեց վերին պալատից, որ իրանից ներկայացնում է նեղ-դասակարգային շահերի պաշտպանութեան տգեղ հանդիսավայր (ծափեր ձախից)։ Այդպիսի իրաւազուրկ մարդկանց կատեգօրիային են դասել նաև հրէաները առևտրի ազգային սահմանափակման գործում։ Ռուս քաղաքացիների այդ իրաւազրկութիւնը ստեղծում է անվստահութեան մթնոլորտ, որ կանգնեցնում է Ռուսաստանի զարգացումը և քայքայում է նրա տնտեսական կեանքը (ծափեր ձախից)։

Առևտրի մինիստրը առարկում է վերոյիշեալ հռետորների նկատողութիւններին, կանգ առնելով բանւորական օրէնսդրութեան, ակցիոներական ընկերութիւնների, ժամանակակից արդիւնաբերական կօնիւնկտուրի և այստեղից բղխող միջոցների վրա։

(Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը ներկայումս զբաղված է Կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեվիչի արձանի համար յարմար տեղ որոշելու հարցով։ Արձանը կանգնեցնելու համար առ այժմ նկատի է առնվում չորս տեղ.—Երևանեան հրապարակ, Շտաբի հրապարակ (զինւորական-շրջանային շտաբի, Թամամշեանի քարվանսարայի և Պուշկինեան այգու մէջտեղը եղած հրապարակը), Գօլովինսկի պրօսպեկտի անկիւնը (Բարեատինսկայա փողոցի մօտ) և Վերայի զառիվայրում։ Արձանի տեղի համար պահանջվում է 50 քառակուսի սաժէն հող։

◆ Կովկասում մելիօրատիվ համագումար կազմակերպող բիւրօն դիմել է Թիֆլիսի բուսաբանական այգու վերատեսչին, Նօվօ-Ալէքսանդրեան գիւղատնտեսական ինստիտուտին և Կովկասի երկրագործական և անտառային վարչութեան կառավարչին և շատ հիմնարկութիւնների, խնդրելով իրանց պաշտօնեաներին ուղարկել համագումար՝ զեկուցումով կամ մելիօրացիայի վերաբերեալ նիւթերով մասնակցելու։

◆ Սաղցաբանական գործի կօմիտէի վարչութիւնը մի յատուկ յանձնաժողով է կազմել Անդրկովկասը գիւղատնտեսական, առևտրական, տեխնիքական և տնտեսական տեսակէտից հետազօտելու։ Յանձնաժողովը գործելու է Թիֆլիսի հիմնարկութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Կօմիտէտը մտադրութիւն ունի դիմել առևտրի և արդիւնաբերութեան մինիստրին, խնդրելով Մոսկվայի սաղցաբանական կօմիտէտի նախագահ պրոֆ. Դ. Ն. Գօլօմինին ուղարկել Թիֆլիս կօմիտէտի հետազօտական աշխատանքներին մասնակցելու։

◆ Պատրաստութիւն է տեսնվում Արքունական թատրոնի բեմի վրա ներկայացնելու Օգոստափառ հեղինակ Կ. Ր.-ի «Царь Іудейскій» պիէսան։

◆ Յունիսի սկիզբներին քաղաքագլուխ Ալէքսանդր Խատիսեան 2 ամսվայ արձակուրդով հեռանում է քաղաքից։ Նրա պարտականութիւնները կատարելու է Գ. Դ. Ժուրուլի։

◆ Զուբալովի անուան Ժողովրդական Տունը ամառային սեզօնի պատճառով յունիսի 2-ից մինչև օգոստոսի 28-ը փակ է լինելու։

◆ Նահանգապետը Տէր-Պետրոսեանին և Մայսուրաձէին հաստատել է որբերի դատարանի անդամների պաշտօնում։

◆ Քաղաքագլուխը Պարիզից, Թիֆլիսի տանատէր Ի. Գ. Թամամշեանից մի հեռագիր է ստացել, որով վերջինս յայտնում է, թէ ինքը պոլիտեխնիկումին նուիրաբերում է 500 րուբլի։

◆ Վարժուհիների ընկերութեան վարչութիւնը յունիսի 1-ին, Ալէքսանդրեան այգու ներքին մասում, կազմելու է մանկական տօն-զբօսանք։

◆ Ս. Նշանի Մարիամեան դպրոցում բացված է աշակերտական գործերի՝ նկարչութեան և ձեռարուեստի ցուցահանդէս, որը բաց է առաւօտեան ժամը 10-ից մինչև 2-ը և տևելու է մինչև ամսի վերջը։

ԿՈՎԿԱՍ

◆ Գանձակից մեզ գրում են. «Գանձակի նահանգում սխրագործութիւններ կատարող յայտնի աւազակապետ Դալի-Ալին սպանվել է իր թշնամի թուրքերի ձեռքով։ Թշնամիները կաշառել են մի մարդու, ազգով թուրք, որը և սպանել է յիշեալ աւազակին։ Այժմ ոստիկանութիւնը ձերբակալել է թէ սպանողին և թէ սրան կաշառողին»։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետերբուրգից հեռագրում են, որ Վրաստանի էկզարխի պաշտօնի համար առաջ է մղվում Երևանի եպիսկոպոս Պիմէնի թեկնածութիւնը։ Ռուսաց սինօդը համակրում է այդ թեկնածութեան։

◆ Մայրաքաղաքի լրագիրների ասելով, շտալմէյստէր Դէնիսովի բնակարանից 200,000 րուբլու իրեղէն գողացող անձը Դէնիսովի հարազատ տղան է։ Ինչպէս յայտնի է, Դէնիսովների բնակարանում, «Մէդվէդ» հիւրանոցում, մինիստրներից մէկի և տ. Դէնիսովայի միջև տեղի ունեցած սիրային դէպքից յետոյ, ինքնասպանութիւն գործեց Դէնիսովի որդիներից մէկը։ Յայտնի է նաև, որ յիշեալ մինիստրը նորերս հարց էր յարուցել ամուսնանալու տ. Դէնիսովայի հետ, որ և աշխատում էր ապահարզան ձեռք բերել ամուսնու կամքի հակառակ։ Այժմ, յիշեալ գողութիւնից յետոյ, լրագրական տեղեկութիւնների համաձայն, Դէնիսովը դադարեցրել է ապահարզանի գործը, պարտաւորվելով վճարել կնոջը 663 հազար րուբլի։

◆ Ռոստովում Դ./Վ. երկրորդ անգամ տեղի ունեցած հեղեղը խոշոր վնասներ հասցրեց քաղաքին. 6 մարդ խեղդվել են։

◆ Ռումինիայից վերադառնալուց յետոյ, մինիստր Սազօնովը կարևոր յայտարարութիւն է անելու Պետ. Դումայում։

◆ Պր. Միրէժկովսկին ժող. լուսաւորութեան մինիստրին յայտարարութիւն ներկայացրեց Կազանի պրօֆէսօրի կոչումից հրաժարվելու մասին։

◆ Փակված «Россія»-ի աշխատակիցներից Գուրլեանդին տրվել է նպաստ 8000 ր., Սիրօմօսնիկովին 10,000 րուբլի, շատերին 5000-ական րուբլի։

◆ Պուրիշկևիչը Պետերբուրգի նահանգ. դատարանում պահանջեց ցոյց տալ ինչ-որ մի կողմնակի անձի քաղաքացիական գործը։ Դատարանի գործավարը մերժեց։ Պուրիշկևիչը փորձեց սկզբում սպառնալ, յետոյ գնաց դատարանի նախագահի մօտ, որ անմիջապէս կարգադրեց ցոյց տալ գործը։

◆ Կիևի բաղանիքում ձերբակալել են երեք ուսանողի, որոնք խօսում էին իրանց հետ լողացող զինւորների հետ։ Նրանք մեղադրվում են հակակառավարական պրօպագանդայի մէջ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(Դասախօսութիւն Սուրխաթեանի)

Շաբաթ, մայիսի 24-ին, Կ. Հ. Բ. Ընկերութեան դահլիճում պ. Սուրխաթեան խօսեց վերոյիշեալ նիւթի մասին։

— Վերջին ժամանակներս, սկսեց դասախօսը,—ինչպէս նկատելի է մեծ հետաքրքրութիւն է զարթել հայերի մէջ դէպի գրականութիւնը առհասարակ։ Այժմ սկսվել են վերագնահատման ենթարկվել հին արժէքները. ինտելիգենցիան առանձին և տարբեր տեսակէտներով է մօտենում այդ արժէքներին և ըստ այնմ իր գնահատումն է տալիս։

Այնուհետև դասախօսը համառօտ կերպով խօսելով այդ տեսակէտների մասին, անցաւ գեղարուեստական գրականութեան և մի շարք դիտողութիւններ անելով կանգ առաւ քննադատութեան վրա։

Դասախօսը գեղարուեստական գրականութեան միւս տեսակի քննադատութեան հակադրեց սօցիօլօգիական-գեղարուեստական տեսակէտը, որը և համարեց միակ ճիշդ տեսակէտը բոլոր եղածների մէջ։

Այնուհետև դասախօսը խօսեց ապագայի հասարակութեան և այդ հասարակութեան գրականութեան մասին և այն միտքը յայտնեց, որ ապագայում կազմվելու է մի նոր հասարակութիւն, որը հիմա ստորադաս է համարվում, և այդ հասարակութիւնը ունենալու է իր սեփական գրականութիւնը, որը լինելու է իր հոգու, իր զգացմունքների, յոյզերի ու տենչերի արտայայտիչը։

Վերջում եղաւ մտքերի փոխանակութիւն. խօսեցին Գ. Մեսեան, Յ. Սօլօմեան, Այվազեան և Վ. Տէր-Դիլօյեան։

Դասախօսը պատասխանեց ամենքին։

Դասախօսութեան բովանդակութիւնը կը տանք հետևեալ համարում։

Ս. Ր.

ՄԱՄՈՒԼ

Նորերս, ինչպէս յայտնի է հեռագիրներից, Պետերբուրգում վախճանվեց իշխան Պ. Դ. Սվեատոպոլկ-Միրսկի, ներքին գործերի նախկին մինիստրը, որի անուան հետ է կապված Ռուսաստանի ազատագրութեան շարժումը։ Այդ առիթով «Баку» լրագրի աշխատակից Գր. Ս—վ հետևեալն է գրում.

Երբ նրան՝ Պլեվէի մահից յետոյ, նշանակեցին ներքին գործերի մինիստր, նա յայտարարեց, ինչպէս հաղորդեցին ժամանակի լրագիրները.

— Ես ձեզ բերի թարմ օդ...

Եւ տանջված, պլեվէական ռէժիմի քմահաճոյքից ու դաժան ճնշումներից յոգնած Ռուսաստանը հաւատով ու յոյսով կառչեց այդ խօսքերից։

Եւ այն ժամանակ շատերին թւում էր իսկապէս, որ ռուսական հողի վրա զգացվում է թարմ և մաքուր օդ։

Եւ անգամ ծերունի Սուվօրինը, նա էլ իր «Нов. Время»-ում սկսեց գրել և խօսել գարնան մասին...

Հաւատում էին հրաշքին։ Հաւատում էին, որ իշխանութիւնը հասարակութեան հետ միասին կընթանայ ազատ զարգացման նոր ուղիներով։ Եւ չի լինի Ռուսաստանի համար կործանարար իշխանութեան «առանձնացումը» հասարակութիւնից, որը ստեղծվել է երկար տարիների անվստահութիւնից, երկիւղից և հասարակական ոգու բոլոր ազատ արտայայտութիւնների վրա արված սաստ ճնշումներից։

Բայց թարմ օդը և գարունը, այդ ամենը մնացին առասպել և գեղեցիկ խօսքեր միայն։ Եւ չարդարացած յոյսերը, մեռաւ երևաց և նրանց վրա եղած հաւատը։ Եւ հրաշք չը կատարվեց։ Ինքը մինիստրը, որ այնպէս ուրախացրեց հասարակութեան իր թևաւոր խօսքերով, ըստ երևոյթին չափազանց թանկ գնահատեց իր ուժերը։ Նա չը բերեց «թարմ օդ»։ Եւ այն թեթև քամին, որ պէտք է անցնէր երկրի վրայով, լռեց և մեռաւ։

Մինիստրը հեռացաւ հանգստանալու, հեռացաւ քաղաքականութիւնից ու գործերից, և այլ ևս ոչ ոք ոչինչ չէր լսում նրա մասին։ Գրեթէ տասը տարի անցաւ այն օրից։ Շատ բան փոխվեց կեանքում։ Իրան հաւաքեց և հասունացաւ հասարակութիւնը, և ոչ այնպէս, ի հարկէ, որ հեշտութեամբ հաւատար խոստումներին։

Ժպիտով յիշվում են խանդավառութեան ու յոյսերի այն օրերը, որ առաջ բերեց մինիստրի յայտարարութիւնը։ Սակայն այդ ամենի հետ միասին մինիստրի յիշատակը, որ այնպիսի ջերմ լաւ խօսքեր ասաց, չի մեռնի հասարակութեան մէջ։ Թող թէև նա ոչինչ չարեց, թէև չը կարողացաւ Ռուսաստանը շրջապատել թարմ օդով, բայց նա ցանկութիւն ունէր անելու այդ, անկեղծ, ճշմարիտ ցանկութիւն։ Հէնց նրա այդ խօսքերն արդէն ծառայութիւն էին, որ նա առաջինն ըմբռնեց պաշտօնական կառավարիչ շրջաններում, որ Ռուսաստանի համար անհնար է առանց առողջութեան վնասելու շնչել նեխված, հեղձուցիչ և ճնշող օդը...

Իշխանը հասկացաւ, որ անկարելի է իշխանութեանը հակառակ գնալ հասարակութեան, անկարելի է ամենուրեք և ամեն տեղ քմահաճոյքի և ճնշման միջոցներով բաժանել իշխանութիւնը հասարակութիւնից՝ ոստիկանութեան, զրկման և անվստահութեան պատնէշով։

Իշխանը ուղիղ կերպով գնահատեց ստեղծված դրութիւնը, գեղեցիկ կերպով հասկացաւ պետական կեանքի իսկական էութիւնը։ Սակայն նա մենակ էր և չափազանց թոյլ, որ կարողանար համոզել իր պաշտօնակիցներին, թէ Ռուսաստանին խորապէս անհրաժեշտ է թարմ օդ...։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաքու, 20 մայիսի

«Մշակի» № № 86-ում և 87-ում կարդալով «Զէնգեզուրի լրաբեր» վերնագրով՝ Մենտոր-Միրաժի Եւլաւ-Տուզի երկաթահանքի և մօտակայ հանքերի մասին գրած յօդուածները, հարկադրված եմ, թիւրիմացութիւնների առիթ չը տալու համար, պարզաբանել հանքերի մասին գրվածը։

Ես կառավարութիւնից ձեռք եմ բերել մօտաւորապէս 20 քառակուսի վերստ հողի շահագործման իրաւունք, որը մասնագէտներից ճանաչված է պղնձեայ, քարածուխի, ալեբաստրի և տեսակ տեսակ գոյների (օխրա) հանքեր։ Այդ կից լինելով Տօնաշէն գիւղացոց արքունական նադելի հողերին, կարևորութիւն եմ ունեցել ձեռք բերելու և այդ նադելի մի մասը։ Օրէնքով գիւղացոց նադելի հողերի սեփականութիւնը պատկանում է կառավարութեան, որոնց համար և պեղումների իրաւունք ստացել եմ նրանից, իսկ գիւղացիներին՝ հողի երեսից օգտվելը։ Գիւղացիները օրինաւոր համախօսականով և նօտարական պայմանով զիջել են ինձ, իրանց հողերից միայն մի մասը, բոլորը 140 դեսեատին, որից միայն 40 դեսեատին կարող է լինել վարելահող, մնացեալը ապառաժ է. այդ հողամասը կից լինելով պղնձահանքիս, ես դրա փոխարէն, ոչ թէ, ըստ Մենտոր-Միրաժի, վճարել եմ նրանց 200 ր., այլ 210 ր., պարտաւորվելով նոյնը շարունակել ամեն տարի, որքան գոյութիւն կունենայ հանքը, իսկ 2500 ր. էլ միանուագ, որը իմ որոշմամբ պէտք է մնայ իբրև ֆոնդ Տօնաշէն գիւղի։ Այստեղ դեռ պէտք է ի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ առաջիկայ յունիսից պէտք է ձեռնարկեմ սկզբնական պեղումներին, որից որոշ քանակութեամբ պէտք է օգտվեն գիւղացիները։

Յովսէփ Մելիք-Շահնազարեան

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 9 մայիսի

Լիլաւա-Թաղի «Հայկազեան-Թամարեան» երկսեռ դպրոցներիս հոգաբարձութիւնը 1913—1914 թ. ուսում. տարում ստացել է հետևեալ դրամական նուէրները. 1) Պր. Թումանեան (շէնքի նորոգման համար) 500 ր., Սալմաստից՝ Բ. Մեհրաբէքեանի միջոցով 50 ր., Արսէն Դանիէլեանից 15 ր.։ Գումարն է 565 ր.։ 2) Շիրվանից՝ Խաչ. Յովսէփեանի միջոցով 200 ղրան, Նիշաբուրից՝ Յ. Դանիէլեանի միջոցով 280 ղր., Մեշէդից՝ Մ. Յարութիւնեանի միջոցով 280 ղր., Զուբարից՝ Յ. Սուխիասեանի և Ռ. Թամրազեանի միջոցով 1150 ղր., Սաբզվարից՝ տ. Վ. Բէժանեանի միջոցով 258 ղր., Գումարն է՝ 2168 ղրան։

Բանի որ ուսում. տարին մօտենում է իր վախճանին, խնդրում ենք բոլոր նրանց, որոնց մօտ ցարդ մնում են մեր հանգանակութեան թերթերից, շտապեն շուտով մեզ ուղարկելու, որպէսզի հոգաբարձութիւնս հնարաւորութիւն ունենայ ժամանակին իր հաշիւները փակելու։

Հոգաբարձութիւն

Գիւլագարակ, 16 մայիսի

Շնորհակալութիւն ենք յայտնում Բաքուի մի խումբ նուիրատուներին, որոնց անունով գիւղիս ծխ. դպրոցի գրադարանը այս տարի ստանում է մի օրինակ «Մշակ»։

Շնորհակալութիւն նաև պ. Մկր. Քալանթարեանին, որի հաշւին նոյնպէս դպրոցիս գրադարանը ստանում է այս տարի մի օրինակ «Գիւղատնտես» շաբաթաթերթ։

Ռ. Իսկէնտէրեան

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

Կ. ՊՈԼՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

«Մշակի» № 92-ում կարդացի Կ. Պօլսի Կենտրոնական վարժարանի նախկին աշակերտ և ուսուցիչ, յայտնի գրականագէտ Արշակ Չօպանեանի առաջարկ-յօդուածը նոյն դպրոցի մասին։ Ցաւալի է, որ Ջերազի և Մոստիճեանի տեսչութեան օրով իրապէս մի բարձրագոյն կրթական հաստատութիւն եղող այդ դպրոցը այժմ մի կանոնաւոր միջնակարգ կրթարան էլ չի ներկայանում։ Ա. Չօպանեանը վերջին հանգամանքը բացատրում է դպրոցի նիւթական պակասութեամբ և առաջարկում է դպրոցական ֆոնդի համար հաւաքված գումարներից կամ Ղուկասեան ժառանգութիւնից բաժին հանել իմ և իր alma mater-ին՝ նրան անհրաժեշտ բարձրութեան վրա պահելու համար։

Որպէս մի կենտրոնականցի և որպէս մի Թիւրքիացի՝ բոլոր հոգով բողոքում եմ իմ նախկին ուսուցչի այդ առաջարկի դէմ։ Ճիշդ է, ցաւալի է Կենտրոնականի դրութիւնը, պէտք է նրան բարձրացնել, իր նախկին դրութեան հասցնել։ Բայց ո՞վ պիտի անի այդ։ Մի՞թէ կովկասահայ ժողովուրդը, մի՞թէ արդէն հաւաքված (այլ նպատակներով) դրամներով։ Ո՛չ, բաւական է կովկասահայերի առատաձեռնութիւնը խնդրել, նրանց օգնութեան դիմել, նրանց հաւաքած դրամներով գործ կատարել Թիւրքիայում։ Սա մուրացկանութիւն է, փոքրոգութիւն է, եթէ կուզէք, նոյնիսկ անբարոյականութիւն է։ Եթէ Թիւրքահայ ժողովուրդը չի կարող մի հատ կրթական հաստատութիւն պահել, թող փակէ նրա դռները։

Արշ. Չօպանեանը ասում է, որ Կ. Պօլսի Կենտրոնականը, ինչպէս և Ներսէսեան դպրոցն ու Գէորգեան ճեմարանը համազգային հաստատութիւններ են, որոնց պիտի նպաստէ ամբողջ ազգը։ Շատ լաւ. բայց ասացէք, խնդրեմ, ինչ ենք տուել Թիւրքահայերս Ներսիսեան դպրոցին. բացարձակապէս ոչինչ. մինչդեռ նոյն դպրոցը մեզ տուել է բազմաթիւ ուսուցիչներ։ Մի՞թէ նոյնը չի կարելի ասել Գէորգեան ճեմարանի մասին էլ։ Թիւրքահայերը նրան ոչինչ չեն տուել, բայց նրանցից օգտվել են ամենամեծ չափերով։ Սանասարեանը, միակ նիւթապէս ապահովված կրթական հայ հաստատութիւնը Թիւրքիայում, դարձեալ կովկասահայի դրամագլխով է պահվում. դարձեալ կովկասահայ Ղուկասեանն է, որ Թիւրքիայում ճեմարան է հիմնում։ Ասացէք, իմ սիրելի նախկին ուսուցիչ, արդեօք մեր ստացածների գոնէ $^{1}/_{100}$ մասը վերադարձրել ենք կովկասահայերին։ Ո՛չ։ Ուրեմն ինչու ենք նոր բան ուզում։ Այսպիսի դէպքերում ես ամաչում եմ յայտարարել իմ Թիւրքահայ լինելը. այդքան էլ մուրացկանութիւն։

Եթէ մի Երամեան Վանից գալիս է Թիֆլիս իր դպրոցի համար աջակցութիւն ուզելու, դա թէև ոչ ցանկալի, բայց հասկանալի է. Նոյնպէս հասկանալի է, երբ Կիլիկիայի որբերի համար են Կովկասում փող հաւաքում. բայց երբ Կ. Պօլսի միակ «բարձրագոյն» կրթական հաստատութիւնը, որ ամբողջ Թիւրքահայութեան է պատկանում, Կովկասից օգնութիւն է ուզում, դա արդէն անհասկանալի է։ Ներեցէք, Նախկին ուսուցիչս, որ այսպէս խստօրէն եմ արտայայտվում. Եթէ դուք էլ ապրէիք ինձ նման Կովկասում, զգայիք բարերարեաների բարերարողների ներկայութեամբ զգացած ամօթը, ինձ նման կարտայայտվէիք։

Կենտրոնականը Մոստիճեանի կամ Ջերազի օրով գտնվում էր իր բարձրութեան վրա. ասացէք, մի՞թէ այն ժամանակ այդ դպրոցը նիւթապէս ապահովված էր։ Ո՛չ։ Բայց նա ունէր նուիրված ու բարձր յատկութիւններով օժտված ղեկավարներ։ Յիշում եմ, դուք էլ անշուշտ կը յիշէք, թէ ինչպիսի հաճոյքով հայաստանցի մշակները իրանց դառն աշխատանքով ձեռք բերած փարաները էին գցում Կենտրոնականի գանձանակը, թէ ինչպէս նրանք զուարճանում էին մեզ՝ նոյն դպրոցի աշակերտներին տեսնելով։ Նրանք մեզ համարում էին Հայաստանի ապագայ վերածնութեան առաքեալները։ Իսկ այժմ նոյն հայաստանցին փարա չի տալիս Կենտրոնականին։ Ինչու։ Ահա այդ պէտք է հասկանալ։

Կարող եմ մոռանալ այն զզուելի վերաբերմունքը, որ Թիւրքահայ, մանաւանդ պոլսահայ ժողովուրդը ունեցաւ Ջերազի հանդէպ։ Նրան ընդունեցին արքայավայել փառքերով, միաձայն ազգային ընդհ. ժողովի նախագահ ընտրեցին և... նա մի քանի ամիս յետոյ Կ. Պօլսից փախաւ քաղցած մնալու վտանգից վախեցած։ Նոյնիսկ ուսուցչի պաշտօն չը տուաւ նրան Կենտրոնականը, որ իր նախկին բարձրութիւնը նրան էր պարտական։

Թիւրքահայերը (գաւառներում մանաւանդ) դպրոցներ ունեն և պահում են առանց դրսի աջակցութեան։ Մարզուանի Իգդիր Սահակեան վարժարանը մրցում է Անատոլիա Կօլլէջի հետ, Ամասիայի Երբրանեան առևտրական վարժարանը, Վանի Երամեանը, Սեվազի Կենտրոնականը, Խարբերդի և Թօքատի ազգային իդադինները և Ադաբազարի Կենտրոնականը միջնակարգ դպրոցի բոլոր հանգամանքները ունեն, թէև նրանցից ոչ մէկը նիւթապէս ապահովված չէ։ Նրանք Կովկասից էլ փող չեն ուզում։ Միացեալ Ընկերութիւնները, Հայկական Բարեգործական Ընդհ. Միութիւնը առհասարակ թեւով դպրոցներ են պահում և դարձեալ Կովկասից փող չեն ուզում, Կ. Պօլսի և Իզմիրի հիւանդանոցները, մանաւանդ առաջինը, շատ բարգաւաճ է, թէև դրանք էլ Կովկասից փող չեն ուզում։

Եթէ Կենտրոնականը ըէակցիայի է մատնված, կը նշանակէ՝ նրա վարիչները անընդունակ են կամ նրա գոյութիւնը անհրաժեշտութիւն չի ներկայանում։ Սանասարեանը այնքան բան չի տուել, ինչքան Կենտրոնականը, թէև առաջինը նիւթապէս բոլորովին ապահովված է։ Կովկասեան հայ միջնակարգ դպրոցները ըէակցիայի մի ուժեղ շրջան անց կացրին, թէև նրանք, մանաւանդ Ներսիսեանը, բոլորովին ապահովված են։

Եթէ պէտք է Կենտրոնականը, ապահովենք մենք կենտրոնականցիներս և Թիւրքիացիներս։ Իսկ այդ անելու համար նախ պէտք է Կովկասից մուրալու գաղափարը հեռու վանենք մեզանից։

Մի կենտրոնականցի

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Էրզրում, 14 մայիս

Անցեալ օր Բիթլիսի դէպքերուն մասնակցած կարևոր զինւորական պաշտօնեայի մը հետ, որ նոր էր վերադարձած հոնկէ, տեսակցութիւն մը ունեցայ։ Այդ արժանահաւատ աղբիւրէն ստացուած տեղեկութիւնները մեզ կը բերեն այն եզրակացութեան, որ այդ շարժումը, որչափ ալ սքօղուած է եղեր այս կամ այն դիմակին տակ, այնու ամենայնիւ կրեր է հայաջնջ բնոյթ։ Ձերբակալուած քիւրդերու ցուցումները այժմ մէկ կողմը կը ձգեն անթափանցելի վարագոյրը և դէպքը իր բոլոր բնոյթագծերու մերկութեամբ հրապարակի վրայ կը դնեն։

Կոյր, անգիտակից քիւրդ զանգուածը (իմա քանի մը հարիւր ձերբակալուածներ) պարզապէս խոստովաներ, որոշակի շեշտելով քննութեան առեն, որ ինք կառավարութեան դէմ ոչինչ ունի, որ շէյխերն ու սէյիդը զինքը ոչխարի պէս քշեր են Բիթլիս՝ հայերը ջարդելու, անոնց ինչքն ու ստացուածքը գրաւելու։

Պարզ է այժմ, որ քիւրդական շարժումը քիւրդ դէրէբէյլիներու շահերու շարժումն է և ան անպայման հայաջինջ բնոյթ ունի, որ այդ շարժման սատարողներն են Իթթիհադ ու Իթիլաֆ, ամեն մէկը իր մասնաւը ներկելու համար, և որ ռուսական ինտրիգներ ենթադրելը միանգամայն անմտութիւն է։ Ալ բացատրութիւններու պէտք կը զգացուին։

Թիւրք ժողովուրդի և Թիւրք կառավարութեան Թիւրքահպատակ հայերու վերաբերմամբ կատարած ոճիրները քիչ էին, անոնք բաւական չէին յագուրդ տալու անոնց գազանային բնազդներուն, այժմ ալ կարգը եկաւ ռուսահպատակ հայերուն։

Կիրակի օր Թիւրք դաղաշնիր ոստիկանական Թաղամասի քէֆին տակ ապրող ռուսահպատակ Թ. Թեոսեանի 16 տարեկան աղջիկը առևանգեր են։ Տեսնողներ կ'ըսեն, թէ 2 գաղաշներ Թևերը մտած, մէկն ալ դագանակը ձեռին՝ առեէն՝ կը տանէին աղջիկը։

Որդեկորոյս հայրն ու մայրը դիմած են տեղւոյս ռուսական ընդհանուր հիւպատոսին եղելութեան մասին։ Կ'ըսեն թէ հիւպատոսը շատ խիստ Թակրիրով պահանջած է կառավարութենէն՝ հետապնդել աղջիկը ծնողներուն յանձնելու և յանցագործներու դէմ օրինական միջոցները գործադրելու։ Ասով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ բոլոր Թաղամասերու ոստիկանութիւնը գիշեր-ցորեկ ջանք չի խնայեր աղջկան տեղը գտնելու։ Բոլոր Թաղամասերը ծպտեալ ոստիկաններ կը պտտին, ինքը ոստիկանապետը բոլոր ոյժերը լարեր է այս փափուկ վայրկեանիս բարդութիւններ յառաջ չբերելու համար։

Խմբագրութեանդ քաջ յայտնի է Քէօփրիւ-քէօյի խնդրոյն մէջ այնքան զազրելի և ստոր դեր կատարած Հասան-Կալէի կայմակամը. այժմ, երբ կառավարութիւնը չի կրնար խնդրին տակէն ելնել, կայմակամը կը փոխէ Քեամախ, որ ըսել է՝ ոչ միայն դատի չենթարկեր, այլ և պաշտօնը կը բարձրացնէ։

Իրազեկ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 10 մայիս

Քաղաքական նորանոր դէպքեր միշտ անակնկալներ կը բերեն իրենց հետ։ Ներքին գործոց մինիստր Թալէաթ բէյի գլխաւորութեամբ Լիվադիա ղրկուած պատգամաւորութեան վրայ մեծ յոյսեր դրած են Թիւրքերը և կը կարծեն, թէ Թալէաթ բէյ յաջողութիւն մը ձեռք բերած է, այն է՝ Ռուսիոյ բարեկամութեան հաւաստիքները, թէև այս մասին ոևէ նշան կամ փաստ կը պակսի, և քաղաքական որոշ արդիւնք մը չկայ մէջտեղ։

Միակ շօշափելի արդիւնքը, որ կը տեսնուի, Բ. Դրան օր քան զօր աւելի յանդուգն դառնալն է։

Օսմ. խորհրդարանի մէջ սուլթանին կարդացած գահաճառէն յետոյ ոչ նուազ նշանակելի էր Ա. Նախագահ Խալիլ բէյի առաջին ճառը, որ ամբողջ վրէժխնդրութեան կոչ մըն էր, կորսուած երկիրները չմոռնալու հրաւէր մը։ Խալիլ բէյի այդ ճառը, ռազմաշունչ ոգւով մը գրուած, ցոյց կուտայ, թէ Թիւրքիան վտանգաւոր տարր մը ըլլալ կը սպառնայ աշխարհի խաղաղութեան համար, վրէժխնդրութեան գաղափարով պատրաստուելով ապագայ պատերազմներու։

Արդարև իր կրած պարտութիւնները երբեք չեն զգաստացուցած այս երկրին վարիչները, որոնք կարմիր ներկուած դաշտերու մէջ գոյացած արիւնի լիճերը տակաւին չցամքած՝ նոր պատերազմի մը բոլոր արհաւիրքներուն և դժբաղդութիւններուն մէջ կը նետեն անխորհրդաբար այս երկիրը, դրեդնօուտներ ու մարտանաւեր գնելով և բանակին վերակազմութեան համար իրենց բոլոր ջանքերը Թափելով։

Այս պատրաստութիւնները պրովոկացիօններ են, նետուած ձեռնոցներ, որոնք անշուշտ պիտի ընդունուին—թէև ակամայ—մեր դրացիներու կողմէ, որոնք իրենց կարգին իրենց սահմանները և գրաւումները պաշտպանելու պիտի պատրաստուին։

Այս պայմաններուն մէջ՝ Թիւրքիոյ քաղաքականութեան ոյժ տալ՝ պիտի ըլլար աշխարհի խաղաղութեանը վրդովելու նպաստել, և այս տեսակ դեր մը քաղաքակիրթ պետութիւն մը անշուշտ պէտք չէ ստանձնէ։

Թիւրքիա, որուն մատ ունենալը Ալբանիոյ մէջ ծագած վերջին խռովութիւններուն մէջ հաստատուած է, որոշապէս ցոյց կուտայ իր հակումներն ու ձգտումները։

Էսադ փաշա՝ ապահովաբար երիտասարդթիւրք կառավարութեան թելադրութեամբ սարքած էր իշխան Վիդի դէմ ծանօթ դաւադրութիւնը։ Իթթիհադի օրգանը՝ «Թասֆիրի Էֆքեար» անպատկառ անամօթութեամբ մը այսօր հրատարակած էր սուլթան Համիդի որդւոյն՝ Բիւրհանէտդինի պատկերը՝ իսլամ ալբանացիներուն կողմէ Ալբանիոյ գահուն համար ներկայացուած ընտրելի։ Անոր հետ հրատարակուած էր Վիդ Թագաւորին կնոջ պատկերը, որուն տակ գրուած են սա խորհրդաւոր տողերը՝ «Որ հաւանօրէն իր ամուսնոյն փառասիրութեան համար պիտի զոհուի ի մօտոյ»։

Իթթիհադի օրգանը ուրկէ կառնէ այս հաւանականութեան լուրը։ Շատ հետաքրքրական է գիտնալ։

«Թասֆիրի Էֆքեար» այս երկու պատկերներով կը մատնէ Իթթիհադին Թագուն խորհուրդները։

Իթթիհադը՝ ինչպէս կերևայ՝ ջերմօրէն կը փափագի, որ Ալբանիա իսլամ պետութիւն մը դառնայ և Թիւրքիոյ զինակից մը Բալկանի մէջ։ Հետևաբար կը փափագի, որ Բիւրհանէտդին իշխան կարգուի Ալբանիոյ վեհապետ, և իշխան Վիդ վանուի՝ նոյնիսկ դաւադրութեամբ և ոճիրով։

Շառայլ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Անցեալները յայտնել էի, որ խուլ խլրտումներ են սկսել ֆինանսների ընդհանուր կառավարիչ և ամենակարող բէլգիացի Մօրնարի դէմ. ներկայումս այդ խլրտումները շատ սուր կերպարանք են ստացել և Մօրնարի անհատականից փոխվել են բուռն դժգոհութեան ընդդէմ բոլոր բէլգիացի պաշտօնեաների։ Մօրնարը լինելով միջակ կրթութեան տէր և հրաւիրված Պարսկաստան սահմանափակ ռոճիկով, որպէս մի հասարակ մաքսային պաշտօնեայ, սկիզբներում տնօրէն էր կարգվել մի երրորդական մաքսատան՝ պարսկական Աստարայում։ Սակայն լինելով ի բնէ շրջահայեաց, ընդունակ, եռանդուն մի անձնաւորութիւն, շատ կարճ ժամանակամիջոցում կարողացաւ առաջ գնալ, բարձրանալ և անցնել իրանից հին և Թերևս ցենզով էլ աւելի բարձր իր հայրենակից պաշտօնեաներից։ Կեանքի, ապրուստի, վերաբերումների մէջ սկզբներում չափազանց համեստ, դէպի ընկերներն ու պաշտօնակիցները սիրալիր, սակայն դէպի իր պաշտօնը ծայրայեղ բծախնդիր և պարտաճանաչ, գիշեր-ցերեկ անդուլ գործող, ամեն մի հարց, մի խնդիր անձամբ քննող, վերստուգող և լրջօրէն տնօրինող, այս բոլոր առաւելութիւնները նրան մղեցին դէպի ամենաբարձր պաշտօնը, դէպի ֆինանսների մինիստրի աթոռն ու գանձարանի ամենակարող բանալիները։ Հուստէրից յետոյ, Մօրնարը առաջին դէմքն էր Պարսկաստանում, դէպի որը ուղղված էին բոլորի աղերսական հայեացքները։ Սակայն իր հայրենակից մի քանի պաշտօնեաների չար նախանձից ազատ մնալ չը կարողացաւ նա. և անցեալ տարի, երբ լրացել էր նրա. կառավարութեան հետ անցած պայմանաժամը, Թէ նրան վեցամսեայ արձակուրդ էին տալիս գնալու Եւրոպա և հանգստանալու, բայց նա ինքնայատուկ շրջահայեաց-խոհեմութեամբ, պայմանը նորոգելուց յետոյ իսկ՝ հրաժարվեց այդ արտօնութիւնից և շարունակեց գիշեր ու ցերեկ անդադրում իր պաշտօնն ու աշխատութիւնները։ Զարմանախանձ հայրենակիցներից ոմանք Թէև չը կարողացան նրան տապալել, սակայն իրանց անխոհեմ վարմունքով առիթ տուին ինտրիգասէր պարսիկներին այդ ուղղութեամբ քայլեր անել և ի ցոյց դնել իրանց ինտրիգային բոլոր ընդունակութիւնները... Հետզհետէ շարժումն ու ինտրիգները փոխեցին իրանց ուղղութիւնը և փոխանակ Մօրնարի, Թեքվեցին ընդդէմ բոլոր բէլգիացի պաշտօնեաների։ Այժմ շարժումը ընդդէմ բոլոր բէլգիացի պաշտօնեաների է։ Չը բաւականանալով «Ռաադ» իբր ազատամիտ Թերթի մէջ խմբագրականներ շայլելով շարունակ նրանց հասցէին, անանուն Թռուցիկների և նամակների տարափներով հեղեղելով ամեն տեղ, այժմ էլ սկսել են բուն պարսկական արսէնալի զէնքերը դուրս բերել,—անանուն նամակներով, իբր բարեկամներ Մօրնարի և առհասարակ բոլոր բէլգիացիների, խորհուրդ են տալիս նրանց զգուշանալ, որ, իբր թէ, նրանց դէմ տէրրոր է կազմակերպված և այլն։ Ճիշդ է, Մօրնարն այն անձնաւորութիւններից չէ, որ նշանակութիւն տայ այդպիսի անատամ խածնումներին, բայց երևոյթը տգեղ է, և ապագայում զարգանալով, կարող է նոյն կերպ, ինչպէս Մօրնարի նախանձից փոխվեց դէպի ընդհանուր բէլգիացիները, այնպէս էլ վերջիններիցս փոխվել դէպի բոլոր եւրոպացիները կամ քրիստոնեաները։ Գոնէ այժմ այն մի քանի չարանախանձ բէլգիացիները Թող հասկանան, որ Մօրնարի համար փորած հորի մէջ կարող են և իրանք Թաղվել։ Ֆանատիկ պարսիկների հետ պար բռնելը այնքան էլ անվտանգ չէ...

Մար.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մաքսիմ Կովալեվսկին «Frankfurter Zeitung»-ում գրում է այն ազդեցութեան մասին, որպիսին ունեցել է Ռուսաստանի վրա գերմանական փիլիսոփայական ու գիտական միտքը սկսած Հէգելից և Շելլինգից և վերջացրած ժամանակակից իրաւագէտներով և տնտեսագէտներով։ «Գերմանիան,—ասում է նա,—սխալ է գործում, փակելով համալսարանը ռուսների առաջ, որոնք հանդիսանում են գերմանական կուլտուրայի ու գերմանական գիտութեան տարածողներ»։

◆ Թիւրքաց օպպօզիցիօն տարրերի օրգան ազդեցիկ «Պէեամը» շատ խիստ յօդուած է նուիրել Թիւրք-ռուսական մերձեցման դէմ։ «Պարսկաստանում,—ասում է ի միջի այլոց լրագիրը,—իշխանութիւնը և կառավարութիւնը իրապէս գտնվում է Ռուսաստանի և Անգլիայի ձեռքում։ Բայց մենք, փառք Ալլահին, դեռ մեր երկրում կը մնանք տէրեր. գիտենք Թէ ինչ ենք կամենում, Թէ ինչ պէտք է սպասենք մենք Ռուսաստանից։ Եթէ ժամանակ առ ժամանակ Ռուսաստանը խաղաղութիւն է քարոզում, այդ էլ բացառապէս նրա համար է, որ ժամանակ վաստակէ ներքին բարենորոգումների, զօրքը վերակազմելու համար, որպէսզի առաջին իսկ յարմար դէպքում նորից վերադառնայ յարձակողական քաղաքականութեան Արևելքում»։

ՆԵՎՐԱՍՏԵՆԻԱՆ

եւ ջղային հիւանդութիւնները, սեռական Թուլութիւնը, նէվրալգիան, ողնաշարի հիւանդ., կաթուածները, սրտի հիւանդութ., զառամեալ դրութիւնը, հիծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկւում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է, այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ" անուան վրա և չը գնել կեղծուածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանօտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья С.П.Б.
Մատակարար Նորին Կայսերական Մեծ. Դրան.

№ 3. (М. 8663) 0—4

◆ Կ. Պոլսից «Н. Вр.»-ին հեռագրում են, որ Թիւրքաց կաբինէտի մէջ սպասվում են փոփոխութիւններ։ Արտաքին գործերի մինիստրի պորտֆէյլը տրվելու է «Մ. ու Ա.» կօմիտէտի յայտնի լիդէր՝ Սօֆիայի դեսպան Ֆէթհի-բէյին, որ եկել է Կ. Պոլիս։ Մեծ վէզիրի պաշտօնը երբ Թալէաթ-բէյն է ստանձնելու, իսկ Խալիլը նշանակվելու է դեսպան Լօնդօնում։ Խօսվում է նաև ֆինանսների մինիստր Ջավիդ-բէյի հրաժարվելու մասին։

◆ Մեծ պետութիւնները, բացի Աւստրիայից, վճռեցին Ալբանիայի գահը յանձնել մահմեդականի։ Թիւրքիայի Թեկնածուն է Իզզէտ-փաշան։

◆ Լօնդօնից հեռագրում են, որ սուֆրաժիստուհիները սպառնում են յօդս ցնդեցնել բոլոր լրագիրների խմբագրատները։

◆ Ռումինական գահաժառանգը մեկնում է Կ. Պոլիս։

◆ Պետերբուրգի պարսից դեսպան Իսակ-խանը նշանակվում է դեսպան Հռոմում։

◆ Շանխայում բացվեց գերմանական ինժեներական դպրոց։ Ներկայ էին չինական կենտրոնական և գաւառական իշխանութիւնները։

◆ Անգլիական մամուլում հաղորդվում են տեղեկութիւններ այն հալածանքների մասին, որոնց ենթարկվում են յոյները Փոքր-Ասիայում Թիւրքաց կառավարութեան տեղական մարմինների կողմից։ Անգլիական մամուլը երկիւղ է կրում, որ մօտիկ ապագայում անխուսափելի կը լինի յոյն-Թիւրքական պատերազմը, որ կարող է նոր հրդեհ առաջ բերել Բալկաններում։

◆ Պարիզից հեռագրում են, որ Աւստրիայում գնված 80 աէրօպլանների համար վճարված է 10 միլիօն կրօն։

◆ Ալբանիայից հեռագրում են, որ ապստամբները մօտեցել են Դուրացցօյին։ Նաւահանգստում մի յատուկ նաւ սպասում է պրինց Վիդին ազատելու համար։

◆ Արդարադատութեան մինիստրութիւնը նախագծել է բանալու Պեատիգօրսկում նոր նահանգական դատարան։

◆ Ներքին գործերի և արդարադատութեան մինիստրների միջև տարաձայնութիւն է ծագել մամուլի օրգանների վրա տուգանքներ նշանակելու հարցի առիթով։ Ներքին գործերի մինիստրը գտնում է, որ վարչական իշխանութիւնների դրած տուգանքները չեն ենթարկվում սենատի քննութեան և պէտք է ներկայացվեն մինիստրին։ Սենատը չէ համաձայնում դրա հետ։ Հարցը յանձնվելու է Պետ. Խորհրդի 1-ին դեպարտամենտի լուծման։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Օդոլը, ականաւոր գիտնականների միահամուռ կարծիքով, ներկայանում է իբրև ատամների ողողիչ, որը ներկայումս աւելի կատարելապէս համապատասխանում է ատամների առողջապահական պահանջներին։

Սրուակը 85 կոպ., մեծ սրուակը, որ կը բաւականանայ մի քանի ամիս, 1 ր. 50 կ.։
(М. 141264/141281)

ԻՒՐԻԷՎԻ մասնաւոր համալսարանական կուրսեր

Բարձրագոյն դպրոց, բաղկացած երկու ֆակուլտէտից՝ բժշկական և բնագիտա-պատմական։ Բացված է աշնանային սեմեստրի խնդիրների ընդունելութիւնը I—V կուրսերը բժշկ. ֆակուլ. Վճարը՝ I—III կուրսերի համար 75 ր., IV և V կուրսերի համար 100 ր. իւրաքանչիւր սեմեստրը։ Կուրսերի Խորհրդի կողմից միջնորդութիւն է յարուցված 1914 Թ. բացելու բնագիտա-պատմ. ֆակուլտ. բնագիտա-մանկավարժական բաժանմունքով՝ պատրաստելու միջն. դպրոցների համար աշխարհագր. և բնագիտութեան դասատուներ երկու սեռից։ (Մանրամասն տեղեկ. ուղարկում է կուրսերի դիւանատունը)։ Բացված է ընդունելութիւնը I կուրսը մտնելու համար, իւրաքանչիւր սեմեստրը 60 ր. վճարով։ Ընդունվում են երկսեռ անձեր։ Մանրամասն տեղեկ. ընդունել. պայմանների և կուրսերի իրաւունքների մասին ուղարկում է կուրսերի դիւանատունը։ Խնդիրները պէտք է ուղղել կուրսերի վերատեսչի անունով. Юрьевъ, Лифл. губ., Промышленная ул. (П. 73817) 4—1

ՇԱՐԺԻՉՆԵՐ

ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ

Ինժեներ Գ. Ջ. ԵԱՐԱԼԵԱՆ և ԸՆԿ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, № 9, սեփ. տուն
Տելէֆօն № 9. Կառավարչի բնակարան 14—78.

Գործարանը պատրաստում է և կառուցանում տրանսմիսիաներ, Ֆրիկցիօն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիւներ, շարժիչ-Թեւեր, ատամնաւոր անիւներ, բէզուլիատօրներ, փոկեր եւ այլն։

(և.) 175. 25—8

ՋՐԱՂԱՑՆԵՐ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ իրաւունքներով, ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ և գիմնազիաներն ու այլ դպրոցներն մտնելու ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունելութեան քննութիւնները մայիսի 31-ին, պարապմունքները՝ յունիսի 2-ից։ Ծախվում է հաշւապահութիւնը ինքնուրոյն կերպով սովորելու դասագիրք։ Միխայլօվսկի պր. № 36.

(օ. մ.) 411. 10—10

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—12 ժ. 8 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 2 ժ. 11 ր., Գանձակ 4 ժ. 23 ր., Եւլախ 5 ժ. 43 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 56 ր. եր., Բագու 11 ժ. 50 ր. գիշ.։ **Պօստաւոր գնացքը** № 4—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 1 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 7 ր. առ., Եւլախ 6 ժ. 56 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 40 ր. առ., Բագու 3 ժ. 22 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 25 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 49 ր. եր., Գանձակ 11 ժ. 22 ր. գիշ., Եւլախ 1 ժ. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 12—4 ժ. 5 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 6 ժ. 48 ր. եր., Գանձակ 9 ժ. 32 ր., Եւլախ 11 ժ. 17 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 33 ր., Բագու 7 ժ. 25 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—4 ժ. 58 ր. առ., հասնում է Աղստաֆա 9 ժ. 46 ր. առ., Գանձակ 2 ժ. 15 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 58 ր. ցեր.։ Հաջի-Կաբուլ 11 ժ. 34 ր. գիշ., Բագու 5 ժ. 4 ր. առ..

ԲԱԹՈՒՄ.—**Պօստաւոր գնացքը** № 3—9 ժ. 54 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 7—2 ժամ 18 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 5 ժ. 35 ր. եր., Բաթում 12 ժ. 48 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 9—8 ժ. 53 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 4 ր. գիշ., Բաթում 10 ժ. 1 ր. առ.։ **Խառն գնացքը** № 21 (մարդատարի արագութեամբ ալրանքների համար)—2 ժ. 59 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 9 ժ. 3 ր. առաւ., Բաթում 10 ժ. 10 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 5—8 ժ. 16 ր. եր., հասնում է Միխայլօվօ 11 ժ. 15 ր. գիշ., Բաթում 6 ժ. 33 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստաւոր գնացքը** № 4/3—12 ժ. 56 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 53 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12 ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 11 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 38 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 24/25 (IV կարգի վագօններով)—10 ժ. 58 ր. առ., հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 20 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 4 ժ. 18 ր. առ., Ալագեօզ 10 ժ. 8 ր. ցեր., Ուլուխանլու 1 ժ. 18 ր. ցեր., Նախիջևան 8 ժ. 18 ր. եր., Ջուլֆա 10 ժ. 13 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 18/17—6 ժ. 58 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 1 ժ. 57 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 19 ր., Էջմիածին 10 ժ. 21 ր., Ուլուխանլու 10 ժ. 49 ր., Երևան 11 ժ. 42 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 14|13—11 ժ. 13 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 6 ժ. 14 ր. առ., Ալէքսանդրօպօլ 9 ժ. 41 ր. ցեր., Կարս 1 ժ. 8 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄ.— **Մարդատար գնացքը** № 17/18—7 ժ. 28 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 5 ր. առ., Բօրժօմ 12 ժ. 48 ր. ցեր.։ **Մարդատար** № 19/20—3 ժ. 20 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 51 ր. ցեր., Բօրժօմ 8 ժ. 26 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—7 ժ. 41 ր. եր. **Պօստաւոր գնացքը** № 3—8 ժ. 58 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 7—1 ժ. 42 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 21—2 ժ. 17 ր. գիշերվայ։ **Մարդատար գնացքը** № 11—10 ժ. 5 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4—9 ժ. 30 ր. երեկ.։ **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 55 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 10—9 ժ. 51 ր. առ.։ **Խառն գնացքը** № 22—3 ժ. 55 ր. գիշ.։ **Արագ գնացքը** № 6—11 ժ. 8 ր. առ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստաւոր գնացքը** № 4Д./3—7 ժ. 21 ր. եր.։ **Խառն գնացքը** № 26/27 (IV կարգի վագօններով)—4 ժ. 41 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 18/17—8 ժ. 28 ր. առ.։ **Մարդատար** (Կարսից) **գնացքը** № 16|15—6 ժ. 58 ր. առ.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—10 ժ. 28 ր. եր.։ **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 25 ր. առ.։

ԲԺ. Ե. ՄԻՆԱՍԵԱՆ

Ընդունում է մարսողական—սննդառութեան խանգարումներից (գէրութիւն, սակաւարիւնութիւն, արտէրիօսկլէրօզ, յօդացաւ, պոդագրա), մալարիայից և տուբերկուլօզից տառապողներին։
Պարիզի պրօֆ. Mathieu-ի կլինիկայից։
Առ. ժ. 9—11-ը ◆ երեկ. ժ. 5—7-ը։
Հասցէն՝ Михайловск. пр. 86. Телеф. 765.
(Ե. ու. Կ.) 400. 100—13

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում,
Բեբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեքտրոտէրապիա։ Ընդունելութիւնը առաւ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տելէֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—78

Լոյս տեսաւ
ԴՈՔՏՈՐ Վ. ԱՒ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՄԼՈՒԹԻՒՆ և
ՀԱԿԱԲԵՂՄՆԱՒՈՐԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ
(Ռեցէպտներ և դեղեր հիւանդութեան և այլ դէպքերում յղութիւնից խոյս տալու համար)։
Գինը 25 կոպ.։
Ուրիշ քաղաքներից պահանջողները կը բարեհաճեն ուղարկել 35 կոպ. մարկաներ (ճանապարհածախսը մեզ վրա)։ Վերադիրը վճարով չէ ուղարկվում. գրախանութներին միմիայն կանխիկ 30% զեղչ։
Դիմել՝ Тифлисъ. Редакція «Журналъ-Лѣчебникъ».
(Ե. ու.) 464. 10—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовскаяулица, домъ казенный